



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Բժ. Ս. Բուդեղյան.



ՆՈՒԷՐ

ՀԱՅ

ՎԱՐԺԱՊԵՏԻՆ

371.7

F-91

Ս.-ՊԵՏԵՐԱՌՈՒՐԳ
ՊՈՒՇԿԻՆԵՆՆ ՏՊԱՐԱՆ
1906

49 372

04-4881

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽՍՐԷՆ

Լուսաւորութիւնը ծի անվիճելի բարիք է և տղէտ լինելուց աւելի մեծ դժբախտութիւն չկայ, զի տղիտութիւնը դատապարտում է մարդուն ապրել ոչ մարդկային կեանքով: Կրթական հաստատութեան վարիչներն, երեխային ընդունելով, իրենց վրայ են առնում ոչ միայն երեխայի կրթութեան և բարեկրթութեան պատասխանատուութիւնը, այլ և նրա կեանքի և առողջութեան հոգատարութիւնը: Նրանք ընտանիքի առաջ երկու տեսակ բարոյական պարտականութիւն են լանձն առնում.— ընտանիքին և հասարակութեան վերադարձնել լուսաւորուած և առողջ մարդ և այս պարտականութիւնները պէտք է որ անպայման իրագործուին:

Մինչև վերջին ժամանակներն ուսուցիչը զբաւորապէս զբաղուած էր աշակերտների ուսուցման գործով: Նա աշխատում էր աշակերտներին հաղորդել միայն որոշ գիտութիւններ և կարելոյն չափով նրանց մատաղ մտքերը զարգացնել և հասցնել մինչև կատարելագործութեան ամենաբարձր ստիճաններին:

Խնդրի միւս մասն երկրորդական տեղ էր բռնուած և հետեւանքն այն էր լինուած, որ դպրոցուած, գիտութեան պաշարով զինուած երիտասարդ մարդիկ, կեանք մտնելով, մարմնական հարկաւոր եռանդից զուրկ լինելու պատճառով անկարող էին լինուած ինչպէս հարկն է օգտուել իրենց ձեռք բերած գիտութիւններով:

Ուսուցիչը պէտք է առաջնորդէ երեխայի կրթութիւնը, ուղղութիւն տայ նրա մտքին և նրան նախապատրաստէ գոյութեան գծուար պայմաններին զիմանալու համար: այս պատճառով անհրաժեշտ է, որ աշակերտը Ֆիզիկապէս նոյն չափ զօրեղ և առողջ կողմակերպուի, ինչպէս որ նա կողմակերպուած է բարոյապէս և մտաւորապէս:

Մի խօսքով կարելի է ասել, որ առողջապահական օրէնքներին դպրոցում աւելի պէտք է հետեւել քան թէ տանը, զի առողջապահութիւնը առողջութիւնը պահպանելու մի արուեստ է, որ դպրոցում աւելի հեշտ կարելի է իրականացնել, քան թէ տարբեր հիմունքների վրայ կազմակերպուած տներում:

Առողջապահութիւնը պէտք է ղեկավարէ ժողովրդի հասարակական կրթութեան զործը:

Դպրոց յանախող երեխան այնպիսի հասակի մէջ է լինուած, որ ամենից հեշտ է ենթարկուած հիւանդութիւնների: Վարակիչ սողմերը (նաչալա) նրա թույլ մարմնի մէջ չափազանց պարարտ միջավայր են գտնուած իրենց զարգանալու և արագ բազմանալու համար: Ահա թէ ինչու անհրաժեշտ է երեխային ապահովել նրան շրջապատող բոլոր վնասա-

կար ազդեցութիւններից և նրան այնպիսի առողջապահական յարմարութիւններով շրջապատել, որի մէջ բաւականացուցիչ չափով օդ, որոշ ազատութիւն և յոյս լինի:

Մենք կարծուած ենք, որ ուսուցիչներն, աշակերտներն ու ծնողները քննելով մեր այս գրքոյկի էջերը կը համոզուեն, որ իրենց և իրենց երեխա-էջերը կը համոզուեն, որ իրենց և իրենց երեխաների առողջութիւնը պահպանելու համար մեծ գրքուարութիւնների չեն հանդիպի, եթէ միայն ի նկատի ունենան որոշ կանոններ, որ միանգամ արդէն իւրացնելով, ամենի համար էական անհրաժեշտութիւն կը դառնան:

Մի ժամանակ աշակերտները դպրոցից միայն գիտութիւն էին պահանջուած. նրանք այժմ այնտեղ կը գտնեն և առողջութիւն, առանց որի գուցէ նոյն իսկ գիտութիւնն անօգուտ երեւայ:

«Յուսա՛, հաւատա՛ դրան և սիրի՛ր»:

Սիրի՛ր գիտութիւնը, զի միայն նա է սովորեցնուած թէ ինչպէս փնտրել և գտնել ճշմարտութիւն: Հաւատա՛ առաջադիմութեան (պրոգրես), զի առանց դէպի սպառազան ունեցած այդ հաւատի մարդ անկարող կը լինի ներկան տանել: Յոյսով դի՛ր նոր սերնդի վրայ, յուսա՛, որ գիտութիւնով զօրեղ, մարմնով ու հոգով առողջ այդ սերունդը իւր ազգը կառաջնորդէ յառաջադիմութեան ճանապարհով:

Մենք պէտք է սովորենք սպասել, որ գայ, հասնի նոր ժամանակը: Բայց սպասել խօսքի տակ պէտք է հասկանալ ոչ թէ ծալած ձեռներով անգործ նստել մինչև որ ինքն իրեն գայ, հասնի այն-

պիտի մի ժամանակ, երբ զայլն ու գառը միասին
ապրեն, այլ մենք պէտք է սպասենք անդադար քա-
րողելու և կազմակերպուելու աշխատանքով, որ-
պէս զի ժամանակի ողուն համապատասխան տա-
նենք մեր նոր սերնդի կրթութեան գործը:

Հաստատ հաւատով, համարձակ ու փնտաւան
կերպով մենք մեռք զարկենք մեր լուսաւոր գործին
և առանց մի բոպէ տատանուելու աշխատենք որ-
քան կարելի է սերտ ու պինդ կապերով միացնել
ինչպէս մեր հասարակութեան միւս խաւերը, այն-
պէս և ուսուցիչներին ու աշակերտներին և նրանց
մէջ զարգացնենք զիտակցութիւն ու ինքնադիտակ-
ցութիւն:

Մինչև անդամ 1905 թուի հոկտեմբերին,
Մոսկուայի մի քանի զիմնադեանների աշակերտների
ձնօղներն իրենց ժողովում որոշում արին, որ զբա-
րօցը չպէտք է բաժանուի քաղաքականութիւնից:
Այդ նպատակով ուսուցիչները պէտք է սուսաց լեզուի
և պատմութեան դասերին բացատրեն աշակերտնե-
րին և նրանց ծանօթացնեն իրերի այն զրութեան
հետ, որ ներկայ ժամանակին գոյութիւն ունի երկրի
մէջ:

Ի զէպ, մենք անց ենք կացնում պատմական
շատ նշանաւոր բոպէներ: Պատմութեան դասն
զասերը մեզ ցոյց տուին, հայ-թրքական այս կո-
տորածի ժամանակ, թէ ինչ մեծ զեր է կատարում
հողը և մեր Անդր-կովկասում ցրուած ապրելը և
թէ ապագայում ինչ մեծ նշանակութիւն կարող է
ունենալ մեր համախմբուելը, որից և կախուած է

լինել չլինելու խնդիրը: Ահա թէ ինչու հիմա, հէնց
այժմուահից մեր ամբողջ ուշքն ու միտքը պէտք է
դարձրած լինի այդ միութեան վրայ: Ոչժը՝ միութե-
ան մէջ է. միութիւնը — զօրութիւն է:

Այս միախմբութիւնը մեզ համար պէտք է
բարոյական մի օրէնք լինի, ինչպէս և հայրը, մայրը
կամ ուսուցիչը բարոյական մեծութիւններ պէտք է
լինեն երմխաչի համար: Երեխան նրանց պէտք է
պատկերացնի ոչ իբրև անզգացմունք և չոր ու
ցամաք արարածներ, այլ ինչպէս կենդանի արա-
րածներ, որոնք չարիքը տեսնելիս ցնցում են,
որոնք համակրանքի և բնքշութեան անսպառ աղ-
բիւրներ են:

Բարոյական դաստիարակութիւնը երեխաչի
վրայ ամենամեծ ազդեցութիւնն է անում: Այդ դաս-
տիարակութեան նպատակն է երեխաչից պատրաս-
տել իւր երկիրը, մերձաւորներն ու իւր անձն ու-
նեցած պարտականութիւնները ճանաչող ազնիւ
մարդ:

Այս դաստիարակութեան մէջ է մտնում կամ-
քի և բարոյական եռանդի կատարելագործումը,
սէր՝ զէպի նշմարտութիւնը, լաւի զգացումը, սէր
զէպի բարին, արդարութեան գաղափարը, չարն ու
բարու զանազանութիւնը, զէպի կեանքն ու զէպի
մարդկային ազատութիւնը տածած յարգանքը, վեր-
ջապէս հայրենիքը — այս բոլոր գաղափարները հար-
կաւոր են երեխաչի բարոյական կատարելագործու-
թիւնը կազմակերպելու և ուղղութիւն տալու հա-
մար, որպէս զի նա կազմուածքով պինդ և առողջ

լինի այն ժամանակ, երբ կը գան փորձութեան օրերը:

ժողովրդի իսկական բարեկամի, ժամանակակից ուսուցչի առաջ իսկապէս մեծ խնդիր կայ զրած: Մենք պէտք է թշուառ աշխատաւորին ապրելու և աշխատելու միջոց տանք. նրա աշխատանքը սուրբ է մեզ համար, մենք զիտակցաբար գնանք նրան օգնելու: Նրան, նրա ընտանիքին կատարեալ ապահովութիւն տանք, թող այդ ապահովութիւնը քաղցրացնի նրա ծերութիւնը: Հաստատենք փոխադարձ օգնութեան ընկերութիւններ, օժանդակող դրամարկղներ (կասսա), երկու-երեք տարին մէկ անգամ նրան ամառնային հանգստութիւն տանք իրենց սեփական, ուսուցչական սանատորիաներում կազմակերպելու և հանգստանալու համար: Կանոնաւոր կերպով, պարբերաբար ուսուցչական ժողովներ գումարենք: Վերջապէս ուսուցիչն ու հասարակութիւնը իսկապէս պէտք է մի ձարմին և մի հողի կազմեն և ժամանակ է, որ հայ ուսուցիչը կեանքի խորթ դաւակը չմնայ:

Սիրելի ուսուցչուհիներ և ուսուցիչներ!
✓ Կեանքը Ձեզ վրայ մեծ պարտականութիւն է զրել: Ձէ՛ որ սկսուում է ժողովրդական կեանքը. ժողովուրդը զարթում է դարաւոր քնից. աշխատենք, յարենք մեր բոլոր ուժերը, որ ժողովուրդը արթնանալիս, աչքը բաց անի թէ չէ, ամենից առաջ տեսնի արդարութեան արեւը, ճշմարտութեան լոյսն ու բարու ուժը:

Իսկ ինքնապաշտպանութիւնը?!

Հասարակական սարսափելի ծանր պայմանները, դարերի ընթացքում, մեր ժողովրդին խորը կերպով ներշնչել են այն համոզումը, թէ նա բոլորովին զրկուած է իրաւունքներից: Ցաւելով պէտք է ասել, որ այդ ծանր պայմանները նրա մէջ չանուցլին այն համոզմունքը, թէ անհրաժեշտ է ինքնապաշտպանութիւնը: Այժմ, հակառակ արմատացած հաւատի, նոր աճող սերունդը պէտք է կրթել այնպէս, որ նա զիտակցի, թէ ինքնօգնութեան մէջ է փրկութիւնը:

Պատանին չի կարող ինքնաբերաբար հասկանալ ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը, որը ներկայ պատմական պայմաններում, որի մէջ մենք ապրում ենք, այնպէս մեծ և էական տեղ է բռնում: Ի՜նչ ցուալի սխալ:

Ձեռն աշխատում երեխաների մէջ արթնացնել և զարգացնել մտածողական կարողութիւն, նրանց չեն ներշնչում բնութեան անհրաժեշտ ծանօթութիւնը և նրա օրէնքները, նրանց չեն բացատրում մարդու էութիւնը և մարդկային զարգացման սատիճանաւորութիւնը, նրանց մէջ չի սնուցանւում անկախութեան ոգին:

Ճշմարիտ գիտութիւնը՝ ոյժ է, ճշմարիտ կրթութիւնը ազատութիւն է տալիս: Գիտութիւնը ոյժ է, ոյժը՝ — զիտութիւն:

Բժ. Ա. Բուդուղեան:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Դպրոցի առողջապահական պայմաններն ահազին ազդեցութիւն ունին աշակերտների վրայ: Այդ պատճառով դպրոցը պէտք է շինուած լինի ընդարձակ հրապարակի վրայ, նա հեռու պէտք է լինի խիտ բնակուած տներից, բարձր շինութիւններից, դործարաններից և այլն, որոնք կարող են փչացնել նրա օդը և խափանել նրա լոյսը: Զէ որ փողոցի ամեն մի ձայնը, փոշին, փչացած օդը, ժանտահոտութիւնը (միազմա) վնասակար են ինչպէս հասակաւորների, ևս առաւել երեխաների համար:

Այն գետինը, որի վրայ շինուած է դպրոցը, պէտք է աւագահող կամ կրահող լինի, չոր և շրջապատի մակերևութից աւելի բարձր: Նա երբեք չպէտք է կաւահողի կամ քարքարուտ զեանի վրայ կառուցուի, որովհետեւ այդպիսի գետինները կարող են միայն խոնաւութիւն տալ շէնքի հիմքին:

Խոնաւութիւնը շէնքի ամենավտանդաւոր պայմաններից մէկն է, որովհետեւ այն նպաստում է ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւնների սկզբնաւորութեան: Այսպէս թէ այնպէս, խոնաւութիւնից ազատելու համար, շէնքի տակ, հողի մէջ կամ պէտք է օդանցքներ թողնել՝ զեախնը չորացնելու համար, կամ աւելի չարմար է զետնաչարկ թողնել, որ ամենալաւ միջոցն է խոնաւութեան ներգործութեան դէմ: Կամ ինչպէս այժմ են խորհուրդ տալիս, տեղադրական եղանակով, (ամենալաւ միոցն է համարուած) այնպէս կառուցանել դպրոցը:

որ նրա չորս պատերն էլ աստիճանաբար լուսաւորուին արևի ճառագայթներով: Բայց այդ միջոցը դժուար իրագործելի է. այդ պատճառով շէնքն այնպէս պէտք է կառուցանել, որ նրա ճակատը դարձած լինի արևելք և հիւսիս արևելք, որովհետեւ հարաւային կողմը ասք է լինում, իսկ արևմուտքից քամիներ են փչում: Ինչ խօսք, որ հիմքը քարից պէտք է լինի, իսկ ծնացած մասը լաւ թրքածած աղիւսով բարձրացրած: Շէնքի համար դործածուած փայտը պէտք է չոր լինի, իսկ պատերը բաւականին հաստ: Շէնքի ճարտարապետութիւնը պէտք է պարզ լինի և համեստ, բայց միևնոյն ժամանակ նա պէտք է և սիրուն լինի: Այդ դէպքում աշակերտը սիրով է դպրոց յաճախում: Դպրոցի մուտք արտաքինն աշակերտին չի ներշնչում հարկաւոր յարգանքը:

Դասարանում չիտունից աւելի աշակերտ չպէտք է լինի, և ամեն մի աշակերտին, դասարանի ծաւալից, բաժին պէտք է ընկնի կէս խորանարդ սաժէն տարածութիւն: Դասարանի պատերն ամենապակասը հինգ և կէս արշին բարձրութիւն պէտք է ունենան: Յատակը պէտք է պինդ փայտից լինի, ամենից լաւը կաղնի փայտն է: Եւ յատակի բոլոր ճեղքերը պէտք է լաւ փակուած լինեն: Պատերն ու առաստաղը պէտք է սպիտակացնել կրաշորով, կամ մէկ սաժէն բարձրութեամբ ներկուած լինին ըզգաներկով: Պատերին պատտառ կպցնելը բոլորովին աւելորդ է:

Դպրոցի բակերն ինչքան ազատ լինեն, այն-

քան լաւ աշակերտների համար: Ամեն մի աշակերտին բակի մակերևոյթից պէտք է ընկնէ մէկ քառակուսի սաժէն տարածութիւն: Գետինը չոր պէտք է լինի, աւազով ծածկուած և մի բիչ թեք, որ նրա վրայ եղած ջուրը աղաա հոսէ մի կողմի վրայ:

Դասարանների օդը, շատ յաճախ, չափազանց լիցացած է լինում: Դրա դէմ միակ և ամենալաւ միջոցն է վնասիլեացիա, որ նպաստում է շէնքի փչացած օդի դուրս մղելուն և նրան փոխարինում է դրսի թարմ օդով: Թէպէտ օդափոխութեան համար շատ միջոցներ կան, բայց ցաւելով պէտք է ասել, որ նրանք թանգ են, մինչդեռ դպրոցի միջոցները շատ սուղ են:

Ամառ ժամանակ դպրոցի դասարանները հիւնալի օդափոխութեան են ենթարկւում իրենց պատուհանների շնորհիւ, մանաւանդ երբ բոլոր աշակերտները ցրուած են և դասարաններում լինում է թափանց (սկւոզնեակ) քամի: Չմեռն, ի հարկէ, դասամիջոցների ժամանակ, կարելոյն չափ յաճախ բացւում են միայն օդանցքները. բացի այդ, վառարանները վառելիս ևս դասարանի օդը թարմանում է, թէպէտ դրա հետ միասին զգալի չափով պակասում է և վառարանների տաքութիւնը:

Դասարանները տաքացնելու համար անհրաժեշտ են սովորական աղիւսի և Փալանսի վառարաններ, որոնք ամենից աւելի յարմար են: Չուղունի և առհասարակ շարժական վառարաններն անպատակաւարմար են: Կասկած չկայ, որ օդի տաքութեան աստիճանը Ռէօմ. +12-ից պակաս և

Ռէօմ. +16-ից աւել չպէտք է լինի: Ի դէպ, ամեն դասարանում պէտք է լինեն ստուգուած ջերմաչափեր:

Որքան առատ է դասարանի յոյսը, աշակերտն իրեն այնքան լաւ է զգում դասարանի մէջ: Լոյսը պահպանում է նրա մէջ լաւ տրամադրութիւն, որախացնում է նրան, ամբողջ մարմնի եռանդն աւելի է բարձրացնում և կազդուրում, առողջութիւն է տալիս նրան:

Մեծ նշանակութիւն ունի այն հանգամանքը, թէ ինչ ուղղութեամբ է ընկնում լոյսը: Աւելի յարմար է, որ կողքից լինի և այն էլ ձախ կողմից: Պահանջում է, որ դասարանի լուսամուտների մակերևոյթը հաւասար լինի նրա չատակի մէկ քառորդ կամ մէկ երրորդ մասին: Կասկած չկայ, որ պատուհանների միջի պատերի տարածութիւնը փոքրացնելով, լուսամուտների մակերևոյթը կարելի է անչափ մեծացնել: Պատուհանները պէտք է բարձր լինեն: Նրանց բարձրութիւնը պէտք է հաւասարուի դասարանի լայնութեան երեք հինգերորդ, կամ երկու երրորդ մասին: Այդ պէպքում պատուհանից հեռու նստող աշակերտն էլ նոյն չափ լաւ կարող է օգտուել ներս թափանցող լոյսից, ինչպէս և պատուհանին մօտ նստողը: Յիսուն աշակերտ ունեցող դասատունը պէտք է ունենայ 10 արշին լայնութիւն, 11—12 արշին երկայնութիւն, իսկ 6-ից 7 արշին բարձրութիւն:

Անհրաժեշտ է, որ դասատուներ մաքուր լինին նախ առողջապահական տեսակէտով և երկրորդ

դպրոցում հիւանդութիւն պատահած ժամանակ հեշտութեամբ առաջն առնելու համար:

Օգի մէջ եղած փոշին, վարակիչ հիւանդութիւններ տարածելու գործում, շատ մեծ դեր է կատարում, որովհետեւ փոշին իւր մէջ բովանդակում է այդ բոլոր հիւանդութիւնների սաղմերը:

Դասարանը մաքուր պահելու համար հարկաւոր է այն աւելի և սրբել: Փոշին քիչ-քիչ հաւաքում է յատակի նեղրերի մէջ և կամաց-կամաց այնտեղ կաղմակերպւում է վարակիչ սաղմերի բազմանալու համար ամենայարմար բունները:

Դասարանը լաւ և հիմնաւորապէս պէտք է աւելի՝ պատուհանները բաց արած: Անհամեմատ օդառակար է խոնաւ աւելիլը, քան թէ չոր: Խոնաւ աւելելու համար գործ են ածում մարուր ջրով թրջած փայտի թեփ կամ շորի կտոր: Ժողոված բոլոր փոշին պէտք է այրել:

Չպէտք է մոռանալ առանձին թրջած շորով մաքուր սրբել անկիւններն ու սեղանի ոտների տակերը:

Պատուհանների ապակիների մաքրութեան շնորհիւ արևի ճառագայթները կարողանում են ազատ թափանցել դասարանի ներսը: Դասարանի պատերը, եթէ նոքա ներկած են իւղաներկով, երբեմն-երբեմն պէտք է լուանալ մաքուր ջրով: Իսկ եթէ ներկած են կրաջրով, ապա գոնէ տարին մէկ անգամ պէտք է նորից ներկել:

Դասարանների դռների մօտ պէտք է լինեն գորգի կտորներ և խոզանակներ, ոտների փոշին ու

ցելսը մաքրելու համար, որպէս զի աշակերտներն իրենց ոտների վրայ բերած գաւթի ցելսն ու փոշին դասատուն չաանեն:

Դպրոցում, յատկապէս գիւղերում, աւելի վնասակար է և անբաւարար, ատողջապահական տեսակէտից, արտաքնոցների դրութիւնը: Անհրաժեշտ է առանձնապէս խիստ ուշադրութիւն դարձնել նրանց վրայ: A la turque ձևով շինուած բետերագները (արտաքնոցները) սարսափելի կեղտոտութիւն են տարածում, այդ պատճառով և անթոյլատրելի են: Նստատեղիների վրայ վեր բարձրանալն ու պղպղն ևս արգելւում է, հէնց այդ պատճառով էլ խորհուրդ են տալիս նստատեղին շինել ցած, սեղմուած, նստելու յարմարեցրած և ոչ թէ պղպղու համար: Այն պէտք է փայտից լինի և անոյքը ծածկուի կափարիչով: Կասկած չկայ, որ մաքրելու համար լաւ կը լինէր, եթէ շինուէր ջրի առանձին տաղան (բեզերուար), բայց իբր թանգութեան պատճառով այդպէս չեն անում, այլ նստատեղիի արկղի մէջ դրում են կիզահող (սօրֆ), պարտէզի հող, չորացրած կաւ: Արտաքնոցներն ախտահանում են, գոնէ շաբաթը մէկ անգամ, երկաթէ արջասպով, (1 գրւ. արջասպն արժէ 15 կոպ.), կրաջրով և այլն:

Արտաքնոցի ամեն մի բաժանմունքն այնքան նեղ պէտք է լինի, որ բաւականանայ միայն մէկ աշակերտի համար: Այն պէտք է կամ բոլորովին առանց դռնի լինի, կամ նրա դուռն այնպէս պէտք է լինի, որ ուսուցիչը կարողանայ տեսնել աշակերտի պուխն ու ոտները: Արտաքնոցի պատերն ու

առաստաղը շինուած են շաղախից (ցեմենտ), իսկ յատակը սալածածկ է լինուած և մի քիչ թեք, որ նրա վրայ եղած հեղուկները ծորեն մի կողմի վրայ: Պատերի մէջ պէտք է օդանցքներ թողնել: Բաւական է երկ-երկու արտաքնոց (կլօզէտ) աղաների համար առանձին, օրիորդների համար առանձին: Տղաների բաժնուած պէտք է լինեն ուղղահայեաց միգարաններ (պիսուարներ):

Գիւղերու արտաքնոցների աղբարկղները (լիւկերը) զանազանակերպ են լինուած յարմարեցրած: Շարժական աղբարկղը տեղաւորուած է հողի մակերևոյթից ցած, ցեմենտով պատած աւազանու մ, որտեղից հեշտութեամբ դուրս են տանուած այն և մաքրուած արտաքնոցը: Օդափոխութեան յարմարութիւնը (վենտիլացիա) պէտք է աչքաթող չանել: Արտաքնոցը — կլօզէտը պէտք է վերին աստիճանի մաքուր պահել և բանալին պէտք է լինի ուսուցչի մօտ: Աշակերտը արտաքնոցից դուրս դալուն պէս պէտք է իսկոյն լուանայ ձեռները: Կասկած չկայ, որ մաքրութեան համար ամենալաւ միջոցներն են կանաչիդացիա, ջրանցքներն ու էլէկտրականութիւնը, բայց մեզանում մինչև անգամ քաղաքներում չկան այս յարմարութիւններն, ուր մնաց թէ գիւղերում:

Դպրոցներում խմելու համար պէտք է լաւ ջուր լինի, աղբիւրի ջուր: Եթէ աղբիւրի ջուր չկայ, կարելի է հորի ջուր գործ ածել. բայց հորը պէտք է խոր լինի, առնուազն երեքից չորս արշին խորութեամբ, պինդ շարած աղի սով և աղբակոյտե-

րից, արտաքնոցներից և ուրիշ կեղտոտ ազդեցութիւններից առնուազն տասն և հինգ արշին հեռու պէտք է լինի փորած: Զնայած այս բոլոր զգուշութիւններին, այնուամենայնիւ ջրհորը ենթակայ է կեղտոտուելուն: Նախապատուութիւն պէտք է տալ արտէզեան հորերին, որոնց ջուրն անհամեմատ մաքուր և առողջապահական է լինուած, դերժ հիւանդութիւն ծնող սաղմերից: Որտեղ որ լաւ ջուր չկայ, աւելի լաւ է եռացրած ջուր գործ ածել, իսկ խոլերայի ժամանակ անպատճառ եռացրած ջուր պէտք է գործ ածել: Առհասարակ աշակերտների խմելիք ջրի վրայ պէտք է խիստ խնայուած օգտուել:



88
171

ՄԱՐՄԵՆԱԿԱՆ ԱՌՈՂՅՈՒՆ

Փրանսիական յայտնի մանկավարժ Բուսսելօ իրաւամբ ասում է հետեւեալը. — Ուսուցիչն երբէք չի ստանձնուած դասարանն այնպէս, ինչպէս այն պէտք է լինի. այլ նա միշտ ստանձնուած է դասատունն այնպէս, ինչպէս որ այն կայ: Բայց դորա փոխարէն ուսուցչից է կախուած կարելոյն չափով դասարանին աւելի առատ լոյս ու արև տալը, օդի թարմացնելը և դասատունն աւելի մաքուր ու կարգին պահելը:

Միևնոյնը կարելի է ասել և աշակերտի անձնականին վերաբերեալ առողջապահական պայմանների մասին: Ուսուցիչը պարտական չէ աշակերտի

սննդի մասին հող տանել և ոչ էլ նրան հաւատա-
ցած աշակերտին հազցնել. բայց նա կարող է այդ
նկատմամբ ցուցումներ անել և խորհուրդներ
տալ:

Ճիշտ այնպէս և Դոկտոր Պեկօ, նկարագրելով
ուսումնարանը, նրա շէնքն ու կարասին: այն ա-
ռողջապահական պայմանները, որոնց պէտք է հա-
մապատասխանէ դպրոցը, — որի մէջ աշակերտը
երկար ժամանակ է անց կացնում, շատ տարի-
ներով օրական հինգ կամ վեց ժամ մնալով, — նկա-
տոււմ է, որ դպրոցական ուսուցիչը, ինքը մենակ,
իւր վրայ է առնում այն պատասխանատուութիւնը,
թէ աշակերտն իրեն ինչպէս կը պահի ուսումնա-
րանում:

Դպրոցական առողջապահութեան համար ա-
շակերտի տարիքը խիստ մեծ նշանակութիւն ունի,
քան թէ այդ թւում է: Եթէ դասարանում կան
այնպիսի փոքրիկներ, որոնք անընդունակ են ընդ-
հանուր աշխատանքին մասնակցելու և ստիպուած
են ներկայ գտնուել իրենց համար բոլորովին աւե-
լորդ վարժութիւններին, ապա հասկանալի է, որ
այդ խեղճ արարածների համար, ուսման այդ եր-
կար ժամերն, իսկապէս, միայն մարմնական թու-
լութեան պատճառ կը դառնան: Եւ իրօք այս բանը
նկատոււմ է այնպիսի տեղերում, որտեղ մանկա-
պարտէզներ չկան, այսինքն այնպիսի հաստատու-
թիւններ, որտեղ ընդունոււմ են վեցից պակաս
տարիք ունեցող երեխաներին: Այգպիսի դէպքերում,

հարկուոր է, որ ուսուցիչը զգուշանայ այդ փոք-
րիկներին ընդհանուր սեփմին ենթարկելուց:

Նրանց թիւն որքան և քիչ լինի, այնուամե-
նայնիւ ուսուցիչը պէտք է աշխատէ նրանց ի մի
ժողովել և առանձին բաժանմունք կազմել և որ-
քան այդ հնարաւոր կը լինի, նրանց հետ վարուէ
ինչպէս մանկապարտէզի սանիկների հետ: Եթէ
նրանց թիւը շատ փոքր է, պէտք է սահմանա-
փակուել հեռեւեալ միջոցներով. — երկարացնել դա-
սամիջոցների ժամանակը, ստէպ ստէպ ընդհատել
նրանց կարճ դասերը, վերջապէս փոխել կարգա-
պահութիւնը, առանց խանդարելու նրանց մար-
մնական և մտաւոր զարգացումը. — ահա այս է
Դոկտոր Պեկօ-ի կարծիքը:

Անհրաժեշտ է ծնողներին զգուշացնել, որ
չստիպեն երեխաներին ուսումն սկսել շատ փոքր
հասակից: Ժամանակից առաջ սովորել սխտող երե-
խան, տեսնում ես, վեց տարեկան ժամանակը
հրաշքներ է ցոյց տալիս, իսկ քսան տարեկան հա-
սակում նա նմանում է չորացած ծաղկի: Վեց տա-
րեկան երեխայի տեղը, կարելի է, ասել, միայն ման-
կապարտէզն է:

Այս բոլորը պէտք է ի նկատի ունենալ, որ
շատ մեծ նշանակութիւն ունի: Մրանսիայում տար-
րական դպրոց ընդունում են ոչ պակաս, քան վեց
տարեկան երեխաներ, որոնք կարող են մնալ այն-
տեղ 12-ից 13 տարին: Ուրիշ երկրներում, օրի-
նակ Գերմանիայում, Անգլիայում, Շւեյցարիայում
ընդունելութիւնն սկսում է հինգ տարեկան երե-

խաներից: Առհասարակ պէտք է ունենայ ուսուցիչներին, բժիշկներին և առհասարակ զիտակ մարդկանցից մշակուած մի ընդհանուր կանոնադրութիւն: Սմեներին ծանօթ փաստ է, որ դպրոց մըտնող երեխան պէտք է ներկայացնէ բժշկի տուած ծաղկի պատուաստման վկայական: Իսկ մրանսիայում բացի այդ պահանջում է, որ ընդունուողը հիւանդութիւնից զերծ լինի և այնպիսի արասներ չունենայ, որոնք նրա դասընկերների առողջութեան համար կարող են վտանգաւոր լինել:

Չպէտք է մոռանալ, որ ծաղկի համաճարակի ժամանակ, երեխաների ծաղիկը պէտք է նորից պատուաստել: Առհասարակ երեխաների ծաղիկը պատուաստում են մէկ ծննդից վեց ամիս չետոյ և մէկ էլ՝ տասն տարեկան դառնալիս և այս դէպքում մեծ դեր կարող է կատարել դպրոցական բժշկական վարչութիւնը, որ կարող է աշակերտներին մէջ եղած վարակիչ հիւանդութիւնների դէմ կռուել:

Վերին աստիճանի յանկալի է և անհրաժեշտ, որ ամեն մի անհատ, ուսուցչական ցենզի քննութեան ժամանակ, դպրոցական բժիշկների շրջանում, քննութիւն տար և առողջապահական զիտութեան, թերևս և հոգեբանութեան տարերքի մասին:

Ինչպէս իրաւամբ մատնացոյց է անում Գոկտոր Դէլորէլ, որ ուսուցիչը պարտական է ուշադրութեամբ հետեւել մաքրութեան և նա պէտք է խիստ պահանջող լինի, երբ անմաքրութիւն կամ փնթիութիւն նկատէ: Երեխան պէտք է իմանայ,

որ դասատուներ բարեկիրթ հասարակութեան համար է, ուր ներս է թողնուում միայն նա, ով իրեն կանոնաւոր պահել զիտէ, ով մաքուր է հագնուած և ով որ իրեն համեստ և վայելուչ կարող է պահել:

Գլխաւորի մէջ օրէնք պէտք է լինի, որ աշակերտները դասատուն մտնելիս, ուսուցիչն ուշադրութիւն դարձնէ նրանց զգեստի, կոշիկի, նրանց ամբողջ արտաքինի վրայ, որ նրանք իրենք հետեւեն իրենց անթերի մաքրութեանը: Էական նշանակութիւն ունի ոչ թէ արտաքին մաքրութիւնն, այլ իսկական մաքրութիւնը:

Ընտանիքներում, մօրից պէտք է պահանջել, որ երեխան ամեն օր լողացուի: Նրա գլուխը, պարանոցը, ձեռները, բերանն ու ոտներն անպարսաւ մաքուր պէտք է լինեն, որովհետև մաքրութիւնը ծառայում է իբրև միջոց մարմինը զօրացնելու և ամրացնելու համար: Մի խօսքով մաքրութիւնը մի անհրաժեշտ բան է ամեն մէկի համար:

Կեղտոտ աշակերտների դասատան օդը սովորաբար չափազանց փչացած է լինում, նեխած և լիքը վարակիչ նիւթերով:

Կեղտոտ պահուած երեխաների մաշկի գործունէութեան խանգարումն, ընդհանուր առողջութիւնը պահպանելու համար, վատ պայման է ներկայացնում, որովհետև այդ բանը կաշուի զտանգան հիւանդութիւնների մի նախադուռն է:

Բոլորովին ասում է, որ դպրոցում մաքրութեան մասին ձեռք բերած ճաշակն ու սովորու-

Թիւնք օգտակար է ոչ թէ միայն բժշկական տեսակէտից, այլ և շատ բարեյաջող կերպով ազդում է և աշակերտի դաստիարակութեան վրայ:

Բերանի խոռոչի և ատամների առողջութեան վերաբերմամբ պէտք է ասել, որ մարդու բերանի խոռոչում աճում և զարգանում են անթիւ անհամար միկրոբներ: Նրանք երբեմն երկար ժամանակ ապրում են այնտեղ իբրև անվնաս հիւրեր, բայց հերիք է, որ մարդու թոքերը մրսեն, ապա այդ միկրոբները բերանի խոռոչից պատահաբար ընկնելով շնչառութեան գործարանի նիւղաւորութիւնների մէջ և աւելի հեռուն, կարող են թոքերի բորբոքման հիւանդութեան վարակիչ աղբիւր դառնալ: Այդ մասին երկար զրել են Փրենկել, Դաւիթ Ֆրանսիացի գոկտորները և ուրիշները:

Ահագին նշանակութիւն ունի երեխաներին վարժեցնել ատամները հոգատարութեամբ մաքրել ու բերանի խոռոչը մաքուր պահել: Այս բանի համար միայն պահանջւում է ունենալ իւր սեփական ատամի խոզանակը, սեփական զաւած կաւնի փոշին, ջուր և ուրիշ ոչինչ: Ամենից յարմարն է ատամները մաքրել երեկոյեան քնից առաջ, որովհետև դորանով ատամների արանքում մնացած կերակրի մասերի գիշերուայ փտութեան առաջն առնւում է: Ատամները մաքուր պահուելով ազատւում են նեխումից և ոսկրակեր հիւանդութիւնից:

Առողջ ատամներ ունեցող երեխան լաւ է ծամում և հեշտ է մարսում կերակուրը: Գոնէ տարե-

կան մէկ անգամ պէտք է ատամները ցոյց տա ատամնաբուժի *):

Գլխի, մազերի և եղունգների առողջապահութեան նկատմամբ կարելի է ասել, որ տղաների մազերը սովորաբար խուզում են կարճ, սմեն առաւօտ խոզանակով հարթահարում են և զոնէ շաբաթ մէկ անգամ սապոնով լուանում: Օրիորդները մազերը կարելի է չխուզել, բայց ամեն օր առամբ բացառութեան պէտք է սանրել: Ուսուցիչը պէտք է ամենայն օր պահանջի, որ աշակերտների եղունգները մաքուր լինեն և նրանց տակ կեղտ չհաւաքուի. դորա հետ միասին նա պէտք է հետաքննի, որ աշակերտները չկրճեն իրենց եղունգները: Այս վատ սովորութիւնը սովորաբար նկատուում է նեարդային և կարգ ու կանոնի չվարժուած երեխաների մէջ: Բացի այդ, երեխաներին պէտք է խիստ կերպով պատուիրել, որ իրենց զլխարկներն ու գտակները չփոխեն ընկերների հետ, որովհետև այդ դէպքում նոքա հեշտութեամբ վարակւում են այն պարագիտներով (բորբոս), որ լինում են զլխի մազոտ մասերում:

Ոտների յաճախակի լուացումներն ապահովում են նրանց մաքրութիւնը և երեխային ազատում են մրսելուց: Յանկալի է, որ այդ լուացումները զոնէ օր ընդ մէջ լինեն: Վաննաներ ընդունելը մաքրում է ամբողջ մարմինը և նպաստում է մաշ-

*) Տես «Առջ» օրացոյց 1905 թիւ, պրոֆէսոր Ա. Է. Բերգի յօդուածը ատամների խնամելու մասին, թարգմանութիւն ատամնաբոյժ Մակարեանի:

կի լաւ գործունէութեան: Մինչև անգամ աղքատ ծնողներն ևս չեն կարող և իրաւունք չունեն խուսափելու երեխաներին լողցնելուց պատճառաւնելով, թէ միշտ չունեն այդ անելու, քանի որ ամեն մի ընտանիքի մէջ ևս, եթէ ոչ վաննա, գոնէ լազան կամ լուսացքի տաշտ կը ճարուի, որ կարելի է վաննայի տեղ գործ ածել:

Քաղաքներում այս աւելի յարմար և հեշտ իրագործելի է, եթէ միայն քաղաքային վարչութիւնը, գոնէ իւր աշակերտների ու աղքատ դասակարգի համար, մտածի ունենալ հասարակական ձրի բաղնիքներ և լողարաններ:

Սշակերտը պէտք է հազնուի պարզ, առանց պանուճանքների և մաքուր: Երբէք չպէտք է թոյլ տալ, որ աշակերտը դպրոց դալ կեղտոտ և պատառոտուած շորերով: Եթէ ծնողներն անկարող են այդ պակասը լրացնել, այդպիսի դէպքերում սովորաբար օգնութեան ձեռք են մեկնում քաղաքային վարչութիւններն և դանազան բարեգործական ընկերութիւններ:

Ս.հասարակ զգեստը չպէտք է ձնչէ մարմնի շարժողութիւնները: Եթէ այն առաջ հագել է ուրիշ երեխայ, պէտք է շոգիով ախտահանութեան նկատարկել և ապա տալ միւսին հազնելու: Զմեռը լաւ է բրդէ զգեստը, իսկ ամառը քաթանէ:

Նաւաստի—բլուզը (տես նկ. «Մարմնամարգութիւն») աշակերտների համար ամենալաւ զգեստն է: Տակի շապիկը լաւ է բամբակից լինի, պարանոցի և ուսերի մօտ ազատ: Լաւ է երկու շապիկ ունե-

նալ, մէկը գիշերուայ համար, իսկ միւսը ցերեկուայ: Փուֆայկաներ բոլորովին աւելորդ են: Վարտիկները բամբակից կամ քաթանից պէտք է լինեն, նայած տարուայ եղանակին: Վարտիկները պէտք է ամրացնել բանկոնակների և ոչ թէ գոտիների վրայ, ինչպէս սովորաբար անում են: Գուլպաներն ու չուլիկները ձմեռը բրդից պէտք է լինին, իսկ ամառը բամբակէ: Նրանց կապերը բոլորովին աւելորդ են, այն պէտք է ամրացնել ռեզինի երիզներով (ժապաւէն), որ կտխոււմ է բաձկոնակներից: Լաւ է ամառը գուլպա հագնել, իսկ ձմեռը չուլիկներ: Ինչ վերաբերում է կօշիկներին, աւելի լաւ են չափով կարուած կօշիկները: Ներբանները (տաբան) պէտք է լայն լինին և վերջանան ոչ թէ սուր, այլ տափակ քթով: Կրունկը պէտք է ցած լինի:

Կաշնէ, վզնոցներն ու կորսէտները բոլորովին աւելորդ են. շատ վնասակար են չատկապէս այն կորսէտները, որոնց մէջ շարուած են ոսկրէ ծողեր:

Ինչպէս չաչտնի է ամեն մի ապրող արարածի համար անհրաժեշտ է կերակուրը, առանց որի ամեն մի կեանք մեռնում է: Ուտելու ժամանակն ևս ահազին նշանակութիւն ունի (տեսէք «Ստամոքսի հիւանդութիւններ» մեր զրքոյկը): Կերակուրը պէտք է խառնուրդ կազմէ. նրա մէջ առատ պէտք է լինին բուսեղէն, պտուղներ, ձու, կաթ, իւղ, իսկ մտեղէնը համեմատաբար քիչ պէտք է լինի:

Սշակերտները նախաձաշ պէտք է անեն, եթէ միայն այդ հնարաւոր է, մաքուր օդի մէջ կամ

առանձին շէնքի մէջ, բայց ոչ երբէք զաւրիթում. այդ նպատակի համար շատ ցանկալի կլինէր, եթէ դրպրոցն ունենար աւելորդ մի սենեակ: Այդ նպատակին յատկացրած սենեակը պէտք է վերին աստիճանի մաքուր պահուի, յաճախ սրբուի և լուացուի նրա յատակն ու բարեխղճաբար օգափոխուի:

Ուսուցիչն անպայման պարտական է հետեւել և ուշադրութիւն դարձնել թէ ի՞նչ, կամ ի՞նչպէս են ուտում աշակերտները: Նա պէտք է ուշադրութիւն դարձնի, որ աշակերտները նստած ուտեն և ոչ թէ կանգնած. և եթէ ուսուցիչը նկատում է, որ սնունդը լաւ չէ, առողջարար չէ և աշակերտի համար տհաճ է, ինչպէս ասում է գոկտոր Դէյորէլ, նա պարտական է այդ մասին յայտնելու աշակերտների ծնողներին, ամենաքաղաքավարի և զգուշ ձևով:

Դպրոցական սեղանատներ լինում են միայն մեծ քաղաքներում, որտեղ երեխաները հնարաւորութիւն են ունենում տաք կերակուր ստանալու: Մեզանում կարելի է չարմարեցնել թէյ և կաթ: Երեխաներն արդէն, իրենց հետ դպրոց են տանում բուտերբրոդ (հաց ու պանիր), իսկ ուսուցիչի, կամ դպրոցի ծառայի կինը կարող են աշակերտներին թէյ և կաթ տալ, միայն դպրոցի սեղանատան մէջ: Դորա համար հարկաւոր կլինի աշակերտներից թեթեւ տուրք վերցնել: Աշակերտներից ոմանք, իրենց զրպանի համեմատ, կարող են աւելի տալ, միւսները պակաս: Երեխաներին քաղցրեկէն տալն արգելւում է: Ընդհանրապէս աշակերտների սնունդը

պէտք է հասարակ լինի, ամենից լաւն է կէս-վեզիտարեան, որ շատ անզամ, մենք և ուրիշ բժիշկներ, առաջարկել ենք մեր զրքոյկներում:

6-ից — 13 տարեկան երեխաների համար չափազանց օգտակար է օրական 2 — 3 բաժակ կաթ, 2 — 3 հաւկիթ, շատ քիչ և այն էլ թանձր արզանակ (սուպ), քիչ միս, իւղ, պտուղներ և բուսեղէն: Չափազանց վնասակար են ամեն տեսակ ողելից խմիչքներ, մինչև անզամ սուրճ, մոյգ թէյ և զանազան համեմներ:

13 տարեկանից փոքր երեխաները պէտք է քնեն օրական 10 — 11 ժամ: (Տես իմ «Գուն և երազ» զրքոյկը): Քնելուց առաջ պէտք է խուսափել երեխային երկիւղ ազդող պատմութիւններ անել, և քնելուց միայն 2 — 3 ժամ առաջ կարելի է ուտել, որի մասին ես շատ անզամ եմ զրել: Մահիճը պէտք է կոշտ լինի և ոչ թէ փափուկ, իսկ մահճակալը երկաթէ: Երեխաներին պէտք է սովորեցնել աչ կողքի վրայ քնել: Բարձր պէտք է ցած լինի, իսկ վերմակը բարակ: Առաւօտն արթնանալուն պէս իսկոյն պէտք է վեր կենալ և ջրով ամբողջ մարմինը շփել, ինչպէս որ ցոյց է տրուած իմ «Մտերմական խորհուրդներ պատանիներին» զրքոյկի մէջ: Առհասարակ, կանոնաւոր քունը, կերակուրը, մարմինը ջրով շփելը, բաց օդի մէջ մանգալն ու մարմնամարդութիւնը, վերին աստիճանի ցանկալի են:

ՄՏԱԻՈՐ ԱՌՈՂՁԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Երեսայի մտաւոր կրթութիւնը սահմանափակուած է նրան հարկաւոր կրթական նիւթ մատակարարելով, այս զուտ մանկավարժական հարց է, որի համար անխուսափելի է հոգեբանութեան ուսումնասիրութիւնը: Որպէս զի կրթութիւնը համապատասխան է աշակերտների ուժին ու ընդունակութիւններին, և նրանց համար օգտակար լինի, պէտք է սովորեցնել նրանց ուշադրութիւնը զրաւել, նրանց հետաքրքրութիւնը զարթեցնել և չհարստահարել նրանց եռանդը (էներգիա):

Եթէ ուսուցիչը մասնագէտ մանկավարժների զիտողութեան և փորձի հիման վրայ կազմած յայտնի կանոններին չհետևէ, նա չի կարող երեսաների կրթութեան գործն առաջ տանել, նա նրանց կր յոգնեցնի, կը քայքայի նրանց մտաւոր ոյժերը և կը հասցնի նրանց մտաւոր յոգնածութեան:

Ահա թէ ինչո՞ւ այնպէս անհրաժեշտ են խաղերը, զասամիջոցները, մարմնամարզութիւնները, շարժողութիւնները, որոնք անհրաժեշտ են ուղեղի յոգնածութեան ժամանակ:

Գպրոցում եղած ուսուցիչների թիւն ի նկատի ունենալով և աշակերտների հասակի համեմատ անհրաժեշտ է երկար կամ կարճ զասամիջոցներով ընդհատել ամեն մի դաս և աշակերտների հոգուն ու մարմնին հանգստութիւն տալ: Բաւականին ժամանակ յատկացնել մարմնամարզութեան, մինչև անգամ զինուորական վարժութիւններին

հիմունքներով, չիշելով, որ այդ ոչ թէ մարմնի կամ հոգու կրթութեան է վերաբերում, այլ մարդու

Ուսուցչի գլխաւոր արժանաւորութիւնը նրանումն է, որ կարողանայ հասկանալ աշակերտին, նրա ուշադրութիւնը գորեղացնելու և աշխատանքն աւելի զրաւիչ դարձնելու համար, որովհետև միայն այն աշխատանքներն են արդիւնաւէտ լինում, որոնք աշակերտի մտքի հարցասիրութեանը բաւականութիւն են տալիս և նրա մէջ զարթեցնում են հանելի զգացմունք: Եւ եթէ հարկաւոր եղանակով են տանում կրթութեան գործը, այն ժամանակ, երեսաներն իրենց զասների ժամանակ ևս նոյն չափ երջանիկ են զգում, ինչպէս և խաղերի ժամանակ: Մտաւոր ոյժերի նպատակաւորմար վարժութիւններն ևս յաճախ, եթէ ոչ աւելի, դոնէ նոյնպիսի հաճոյք են պատճառում, ինչպէս և Ֆիզիկական ոյժերի մարզանքները:

Սակայն անհրաժեշտ է, որ ոչ միայն ուսուցիչն աշակերտին յարմարութիւն տայ, այլ և որ աշակերտը իւր կողմից աշխատանքի համար ջանք գործ դնէ:

Չպէտք է բանն այն տեղը հասցնել, որ ամեն իժուարութիւնից խուսափէ, այլ ընդհակառակը երեսային պէտք է վարժեցնել աշխատանքի և առհասարակ նրա համար վատ ծառայութիւն արած կլինեն, եթէ նրան սովորեցնեն ամեն բանի վրայ հեշտ աչքով նայել:

Ճրանախական յայտնի մանկավարժ Գրէար ասում է. մենք մեր տարրական դպրոցներից դուրս

ենք քշել թախիծը. նա այլևս այնտեղ մուտք չունի: Սակայն զգուշանանք, որ աշխատասիրութեան աչքի ընկնող մասն էլ այնտեղից չհնուանայ: Ուսուցիչը երբէք չպէտք է անէ անչ, ինչ որ աշակերտը կարող է անել: Աշակերտն անձնական շանքերից խուսափելով չպէտք է կրաւորական դերի մէջ լինի, որովհետեւ իսկական օգուտը շանքի և աշխատանքի մէջ է:

Վերջապէս, թէ դպրոցում և թէ ընտանիքի մէջ ահադին նշանակութիւն ունի ժամանակի բաշխումը: Պէտք է կարողանալ միայն կարգի դնել աշակերտի պարապմունքը: Ֆրանսիական մանկավարժների և դպրոցական բժիշկների կարծիքով պարապմունքների բաշխումը մօտաւորապէս պէտք է համապատասխանէ հետեւեալ պահանջներին. —

1. Դասի ամեն մի ժամը շարժումների և երգերի միջոցով պէտք է բաժանուի մի քանի զանազան տեսակ պարապմունքների:

2. Այն պարապմունքները, որ պահանջում են աւելի լարուած ուշադրութիւն (թուարանութիւն, քերականութիւն, շարադրութիւն), նշանակում են օրուայ զխաւորապէս առաջին ժամերին:

3. Իւրաքանչիւր դաս, ամեն մի ընթերցանութիւն, ամեն խնդիր պէտք է զուգընթացաբար բացատրուի ու պարզաբանուի բանաւոր խօսակցութեամբ և հարցերով:

4. Դասերի կրկնութիւնն ու վճռած խնդիրների ուղղելը պէտք է լինի դասարանում և անչ ժամերին, որոնց վերաբերում են այդ խնդիրներն

ու դասերը: Կանոնով խնդիրներն ուղղուած են դրատախտակի վրայ անչ ժամանակ, երբ ուսուցիչը նայում է տետրակները: Շարադրութիւններն ուսուցիչն ուղղում է տանը:

5. Դասընթացքի բոլոր առարկաները, ամբողջ շաբաթուայ ընթացքում, հաւասարապէս բաժանւում են 30 դասի: Բացի այդ անհրաժեշտ է, աշակերտների հասակի և ոյժի համեմատ որոշել պարապմունքի ժամերի տեւականութիւնը: Ի նկատի ունենալով ամբողջ ծրագիրը, նրա ամեն մի մասին որոշ ժամանակ յատկացնել, նրանց կարեւորութեան և դժուարութեան համեմատ, և հետեւել այն բանին, որ միշտ թեթեւ վարժութիւններին հետեւէ աւելի դժուար վարժութիւնները, որոնք աւելի լարուած ուշադրութիւն են պահանջում:

Երեխաներն անընդունակ են երկար մտաւոր լարման: Մի քանի ֆրանսիական դպրոցներում ամեն մի վարժութեան տեւականութիւնը սովորաբար 20 կամ 30 րոպէից աւելի չի լինում: Ինչքան էլ որ աշխատեն աշակերտին հետաքրքրել, որքան էլ զբոսաբանեն ու բեւեռեն նրա ուշադրութիւնը, այնուամենայնիւ այդ տեւական չի լինում և նրա ուշադրութիւնն արագ կերպով թուլանում է և ջրում:

Սովորաբար երեխան իւր ամբողջ եռանդը սպառում է դասի սկզբին, որից յետոյ նա աւելի թեթեւ պարապմունքի կարիք է զգում, կամ մինչև անգամ այդ պարապմունքները բոլորովին դադարեցնելու և այն փոխարինելու խաղով կամ կատարեալ հանգստութեամբ:

Երեխան շարժումների կարիք է զգում մինչև անգամ այն ժամանակ, երբ սովորում է: Երեխան հանգիստ է մնում միայն այն դեպքում, երբ նա հիւանդ է կամ սկսում է հիւանդանալ. քանի որ առօրջ է, նա բողբոլում է իւր ունեցած միջոցներով:

Իրաւամբ դոքտոր Ռոշար ասում է, որ ինքնապաշտպանութեան բնազդը, որով բնութիւնն օժտել է բոլոր կենդանի արարածներին, զարթեցնում է երեխայի մէջ փրկարար հակազդեցութիւն:

Երեխան չի կարող նստել իւր տեղը, նա փրսփում է հարեանի ականջին, աշխատում է զսպել իւր ծիծաղն ու փրթկոցը, զուարճանում է թրուչող նաննով և ոչինչ չի լսում. և այս բոլորը փրկում են նրան:

Չափազանց աշխատանքի ազդեցութեան տակ — այսինքն այնպիսի աշխատանքի, որ չի համապատասխանում աշակերտի հասակին և մտաւոր ընդունակութիւններին, — առաջ են գալիս նրա մէջ մի շարք քայքայումներ, որոնք կոչւում են «դրպրոցական յոգնածութիւն». այս՝ մտքի և ուղեղի շափազանց աշխատանքն է:

Մտաւոր աշխատանքի գործուղութեան մէջ էական տեղ է բռնում ուշադրութիւնը: Նա միևնոյն ժամանակ դառնում է և ուղեղի յոգնածութեան ամենազլխաւոր պատճառներից մէկը:

Ուշադրութիւնը ոչ միայն գրգռւում է ուղեղը, այլ և նրա ազդեցութեան տակ ամբողջ օրգանիզմն ուղեղի ակտիւ գործունէութեան համար յարմար պայմաններ է ստեղծում: Մի կողմից նա արեան

հոսանք է առաջ բերում դէպի ուղեղը, միւս կողմից ազգում է սրտի վրայ՝ արագացնում է նրա բաբախումները, փոխելով շնչառութիւնը, կարճ ասած, յոգնածութիւնն իջեցնում է կենսական հակազդեցութիւնը և մարմինն աւելի անընդունակ է դարձնում հիւանդութիւն առաջ բերող գործոնների դէմ կռիւ մղելու համար:

Մտաւոր յոգնածութեան մասին ևս կարելի է նոյնն ասել, ինչ որ մկանների յոգնածութեան մասին: Մտաւոր յոգնածութեան ազդեցութեան տակ զարգանում են առանձնաչատուկ նիւթեր, որոնք թէ ուղեղի և թէ օրգանիզմի համար թոյնի դեր են կատարում:

Սլոգ թունաւոր նիւթերն առաջ են գալիս աշխատանքի շնորհիւ (օրգանիզմի անպէտք մասերն են), որոնց և արեան մէջ հաւաքուելուց մասամբ առաջանում է յոգնածութիւն:

Երեխան որքան որ փոքրահասակ է, նա այն քան աւելի արագ կարող է թունաւորուել, որովհետև չիշեալ արդիւնաբերութիւնը նրանում աւելի դանդաղ է կատարւում քան թէ առնական հասակում:

Կրկնում ենք, որ օրգանիզմի թուլութիւնն ստեղծում է մի հիւանդոտ նախապատրաստութիւն և երեխային դարձնում է ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւնների համար թեթեւ որս, կամ հեշտ կերակուր:

ՄՏԱՒՈՐ ՅՈԳՆԱԾՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԻՆՉ Է
ԼԻՆՈՒՄ, ԿԱՄ ԻՆՉ Է ԿԱՏԱՐԻՈՒՄ ԵՐԵ-
ԽԱՅԻ ՀԵՏ.

Մտաւոր յոգնածութիւնը խանգարում է երե-
խայի զարգացումը և թուլացնում նրա մաքի աշ-
խուժութիւնը: Նա գանդալեցնում է սեռական
զարգացման գործողութիւնը և խանգարում է ոս-
կրային դրութեան աճումը, այսինքն այլանդակում
է ոսկրներն ու կոնքը, ծոռւմ է ողնաշարը, ուսերը
բարձրանում են անհաւասար կերպով և աջ ան-
րակը զգալի կերպով դուրս է ցցւում, երեխան
դառնում է սապատաւոր:

Յոգնածութիւնը շատ տարօրինակ կերպով
ազդում է նեարդային դրութեան վրայ. այն երբեմն
արտայայտւում է ինչ որ ծանրութեամբ, որ երե-
խան զգում է դիտի մէջ, երբեմն առանձին զլխա-
ցաւութեամբ, երբեմն և քթից արիւն է հոսում.
աշակերտը դալկանում է, ծուլանում և այլ ևս
անկարող է դառնում աշխատելու:

Գորան հետևում է ապշութեան նման մի
բան, չեաոյքն էսածութիւն զլխի պտոյաներով և
չանախ նկատւում է նեարդային զրգուումն, սրտի
ձօտերքը ցաւ է զգացւում, անդամների վերջաւո-
րութիւնները սասում և զէմքը դունատւում է:
Ախորժակի բացակայութիւնը առաջ է բերում սա-
կաւարիւնութիւն, իսկ ոմանք էլ աղիքների մէջ
կապ են ստանում,

Յոգնածութիւնից թուլացած երեխաները բրո-

նւում են թոքախտով, որովհետև նրանց վրայ մա-
հացու կերպով ազդում է սենեակի փչացած օդը:
Սակաւարիւնութիւնը, նեարդայնութիւնը այս բո-
լորի հետ տնային անկանոն հոգատարութիւնը, ան-
կանոն կերակուրն ու սնունդը, օդի ու լոյսի բա-
ցակայութիւնը, հոգեկան ամբողջ դրութիւնը (պսի-
խիկա) և այլն, այս բոլորը տուբերկուլեոզի և նրա
տարածման համար նախապատրաստական գործոն-
ներ են:

Յոգնածութեան ազդեցութիւնից չաւասա-
րապէս վնասվում են և զգայաբանները (զգացողու-
թեան գործարանները): Աշակերաներից ոմանք կար-
ծառեսութիւն են ստանում, միւսների ականջների
մէջ լսւում է շարունակ խշշոց: Վերջապէս, քթի
խոռոչի առանձին կազմութիւնը, որ կախումն ունի
աւշատար անոթների խանգարումից, որ կոչւում է
aprosezia (ազենոիդների կամ գեղձերի մեծանալը
քթի և քիմքի խոռոչում) երեխային անընդունակ
է դարձնում ուշադիր լինելու:

Յանախ ծուլութիւնը նոյնպէս ծառայում է
իրրև ամբողջ օրգանիզմի հիւանդութեան մի նշան
այն օրգանիզմի, որ մի և նոյն ժամանակ պէտք է
զարգանայ, և զիմանայ ուշադրութեան դժուարու-
թիւններին:

Այժմ բացւում են մեր դպրոցները, պէտք է
ի նկատի ունենալ այս վերին աստիճանի մանաւանդ
յոգնածութեան վերաբերեալ նշանաւոր հարցերը,
պէտք է բոլորովին լուրջ և ծառայած կերպով

վերաբերուել, ի դէպ չպետք է մոռանալ, որ տանր
տուած պատրաստելու դասերը անօգուտ են:

Մի խօսքով անհրաժեշտ է աչքի անց կայնել
և թերևս կրճատել ուսման ծրագիրները, որպէս
զի թույլ և տկար երեխաներ չկրթել: Այս ամենա-
լաւ միջոցը կը լինի, որով աշակերտների հիւանդու-
թիւնների և մահերի առաջը կառնուի, մանաւանդ
եթէ դպրոցներում սորա վրայ աւելացնուի և հար-
կաւոր բժշկական հսկողութիւն, առհասարակ աշա-
կերտների մտաւոր ծանրաբեռնութիւնների դէմ
կռուելու համար: Եսա բան է կախուած ուսուցչի
տաղանդից, շնորհքից, զիտութիւնից և դէպի այս
սուրբ գործն ունեցած սիրուց:

Ի՞նչ, վարժուհի և ուսուցիչ ես — սուրբ է
այս կոչումը. սիրճւմ ես այս սուրբ գործը, սի-
րճւմ ես երեխաներին, սիրճւմ ես քո ժողովուրդը,
կարօ՞ղ ես, գնա՞ դպրոց, ինչպէս գիտութեան ա-
նար, ինչպէս մի սրբավայր, եղի՞ր իսկական ուսու-
ցիչ և քո ժողովրդի բարեկամ!

ԲԱՐՈՅՍԱԿԱՆ ԱՌՈՂՋՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Բարոյական դաստիարակութեան նպատակն է
երեխայից պատրաստել ազնիւ մարդ, որ ճանաչէ
իւր պարտականութիւնները թէ դէպի իւր հայ-
րենիքը, իւր մերձաւորները և թէ դէպի իւր անձը:
Երեխային ներշնչել բարի սկզբունքներ, լաւ սովո-
րութիւններ չեա մղել, հեռացնել բարոյապէս քմ-
կնելու դէպքերը, ուշագրութիւն դարձնել վարքի
վրայ, առանց կասկածի առիթ աալու, թէ իրեն
հետևում են: Պէտք է հեռացնել նրա աչքից վատ
տեսարանները, հսկել այն ծանօթութիւնների վրայ,
որ նա ձեռք է բերում. հնար եղածին չափով ներ-
շնչել նրան պատասխանատուութեան զգացումը, մի
խօսքով պէտք է ձեակերպել և ուղղութիւն աալ
նրա բարոյական կատարելագործութեան, որպէս զի
երբ դաչ, հասնի փորձութեան ժամանակը, նա ա-
ռողջ լինի և պինդ կաղձակերպուած: Եւ այս բո-
լորը ճշմարիտ դաստիարակութեան գործն է:

Այդպիսով առողջապահութիւն են մացնում,
բարոյական առողջապահութիւն, որի բարերար աղ-
գեցութիւնը երեխայի վրայ երևում է ոչ միայն
այն ժամանակ, երբ երեխան ուսումնարանումն է,
ալլ և երեխան ինքը կտեսնի ալլ բարերար աղղե-
ցութիւնը և չի կորչի գոչութեան կռուի մէջ, երբ
նա առնական հասակի հասնի:

Կրթելու և բարոյականութիւն ներշնչելու նը-
պատակն է լրացնել և շողկապել, բարձրացնել և

ազնուացնել այն բոլոր կրթութիւնը, որ երեխան ստանում է դպրոցում:

Կամպերէ մանկավարժի կարծիքով անհրաժեշտ է երեխային սովորեցնել քննել ուրիշի գործերը: Նրան պարզ և շոշափելի կերպով այնպիսի մարդկանց պատմութիւններ անել, որոնք կամ լաւ են վարուել կամ վատ: Նրան պէտք է վարժեցնել անկախ և ինքնուրոյն դատողութեան, այդպիսով նա ձեռք կբերի պատասխանատուութեան դիտակցութիւն և պարտականութեան հիմնական օրէնքները. յաճախ առիթ պէտք է տալ, որ նա յաղթահարել կարողանայ իւր անձնական ցանկութիւնները և վատ բնագոյները (ինստինկտները):

Այս բարձր գործի մէջ մեծ դերը ոչ զրքերին է պատկանում և ոչ դասերին, այլ ծնողների և ուսուցչի բնաւորութեան:

Նայրը, մայրը կամ ուսուցիչը երեխայի համար բարոյական օրէնքներ են. նոքա պէտք է լինեն ոչ թէ չոր ու ցամաք, զգացմունքից զուրկ արարածներ, այլ կենդանի անձնաւորութիւններ, որոնք չարիքը տեսնելիս ցնցւում են, որոնք լըցւած են համակրանքի, քնքշութեան և բարձր զգայմունքներով:

Այդ բարձր զգացումներն են՝ ճշմարտութեան սէրը, լաւի զգացումը, սէրը՝ դէպի բարին, այն սէրն ու զգացումը՝ դէպի ազատութիւնը, դէպի եղբայրութիւնն ու հաւասարութիւնը, և գոյութեան կռուի ինքնապաշտպանութեան հիմունքները:

Դպրոցական զրաւարաններն իրենց զրքերով

երեխաներին ընթերցանութեան օգտակար նիւթ մտտակարարելով՝ կարող են նպաստել նրանց բարոյական առողջապահութեան: Ընթերցանութիւնն ամենազորձնական միջոցներից մէկն է երեխաներին մտաւորապէս և բարոյապէս կրթելու համար: Յոյս ունենք, որ այժմ մեզանում ամեն մի դպրոց կունենայ իւր գրադարանը, իւր թատրոնական բեմը, իւր զրքերի պահեստը. ի դէպ, զրքերի պահեստը կարող է իւր վրայ առնել և մեր ապագայ զեմստուն:

Բացի դպրոցական զրաւարաններից, դպրոցների կից, պէտք է հիմնել և դպրոցական ընկերութիւններ ալքօօլականութեան դէմ կռուելու համար: Այժմ այդպիսի ընկերութիւններ հիմնելը հեշտ է:

Որոշ թելադրութիւնների և առանձին խնդիրների միջոցով, դպրոցական ուսուցիչը իւր աշակերտներին կարող է բարոյական առողջապահութեան դասեր տալ և յաջողութեամբ կռուել այլօօլականութեան դէմ: Աշակերտների հետ և նրանց միջոցով ուսուցիչները կարող են նպաստել պակասեցնելու անժուժկալութեան ապագայ զոհերի թիւը, հետեւապէս և տնտեսութիւն ու ժուժկալութիւն զաղափարների տարածելուն: Դպրոցումն անհրաժեշտ է ժուժկալութիւն բարոզել և այն օրինակով ցօյց տալ: Պէտք է արգելել դպրոցին մօտիկ ողելի խմիչքի խանութ բանալը: Իւրաքանչիւր դպրոցական պարտական է դպրոցական ընկերութեան անկամ զրուելու այլօօլականութեան դէմ

կռուելու համար: Ներկայումս այդպիսի ընկերութիւններ կան Անդլիայում, Ֆրանսիայում և ուրիշ տեղեր:

Այդպիսի ընկերութիւններ հիմնելն անհրաժեշտ է և որքան վաղ, այնքան լաւ, որովհետև նոր սերունդը, որին աւելի մատչելի են ազնիւ զգացումները, մեզ օգնութեան կը զայ արբեցողների երեխաներին փրկելու համար:

Այդպիսով մենք նրանց հետ միասին կտեղծենք ժողովրդային ընկերութիւնների տնկարաններ, որ անպայման անհրաժեշտ է ամեն տեղ, աշակերտների մէջ կազմակերպել:

Բարոյական առողջապահութեան համար զրպրոցում անհրաժեշտ է և յայտնի դպրոցական կարգապահութիւնը:

Կարգապահութիւնը չպէտք է հիմնուած լինի երկիւղի վրայ: Այն պէտք է բղխէ ուսուցչի և աշակերտի փոխադարձ յարգանքից և սիրուց, այն պէտք է սովորութիւն դառնայ և սէր զարթեցնէ դէպի կարգը:

Մարմնական պատիժների մասին մենք չպէտք է խօսենք. այդ խայտառակութիւն է, թէպէտ երբեմն այդ մասին կարգում ես: Յոյս ունենք, որ այդպիսի ուսուցիչն այսուհետև մեր դպրոցներում մի րոպէ անգամ չի մնայ...

Տարեաւոր է, որ ուսուցիչը կարողանայ խելագել, կամ աւելի լաւ է, որ նախազգուշացնէ այն սխալները, որ աշակերտը կարող է անել, որպէս զի

նա ուղղել կարողանայ հէնց առաջին պատահած դէպքում:

Նախազգուշացնող միջոցները զլիաւորապէս կախուած են ընդհանուր դաստիարակութեան ոգուց, զգացմունքների, խելքի և կամքի կատարելագործութիւնից: Նախազգուշացնող միջոցն արդէն կարգապահութեան կէսն է:

Այսպիսի դէպքերի առիթով մի ֆրանսիացի ասել է. սպառնալիքից առաջ պէտք է զգուշացնել. դպրոցի արտայայտելուց, մոլեղնելուց առաջ պէտք է սպառնայ: Սպառնալիքը չպէտք է ի չարք պործ դնել. բայց երբ բանը սպառնալիքին հասաւ, պէտք է այն զործադրել. եթէ ոչ, հակառակ դէպքում այն ևս անգոր կը դառնայ: Ֆրանսիայում, տարրական դպրոցներում գոյութիւն ունին հեռակալ պատիժները — վատ թուանշաններ, յանդիմանութիւն, դասերից չեռուց, ուսուցչի կամ դաստիարակի հսկողութեամբ դպրոցում պահել, վերջապէս ժամանակաւորապէս դպրոցից արձակել: Ճշմարիտն ասած, վերջին պատիժը թէպէտ երկիւղ է ներշնչում, բայց այն խիստ է: Աւելի լաւ է վատ ընտանեկան դաստիարակութեան համար երեխաների ծնողներին դպրոց կանչել:

Պարզեւտրելու համար ամեն տեղ ընդունուած են բոլորովին ծանօթ միջոցներ, ինչպէս են — դասարանի մէջ լաւ տեղը տալ առաջադէմ աշակերտին, ազգը առանձին տախտակի վրայ գրել, այն պայմանով, որ ազգը տախտակի վրայ գրելը ծառայէ իբրև միջոց աշակերտի անձնական ջանա-

սիրութիւնը և աշխատասիրութիւնը խրախուսելու և ոչ թէ միայն նրա դասերի մէջ ունեցած առաջադիմութիւնը դովելու համար: Մինչև անգամ իբրև վարձատրութիւն, ուսուցչի առաջնորդութեամբ կատարուած են դանազան գրօսանքներ դաշտերում, անտառներում, սարերի վրայ, գործարաններում, դանազան չիշատակարաններ, արծաններ, թանգարաններ և այլն տեսնելու համար:

Որ այս բոլորն անհրաժեշտ է, թէկուզ տօներին, ամառ ժամանակ, այդ մասին շատ անգամ է ասուել. բայց հասկանալի է, որ ամեն բան հարկաւոր է սիստեմատիկաբար և անշեղ կերպով իրականացնել:

Աշակերաններին ուղեկցելու համար, ամառը կարող էին հրաւիրել ուսանողներին: Մենք համողւած ենք, որ կգտնուեն ուսանողներ, որոնք մինչև անգամ առանց վարձատրութեան կհամաձայնուեն. իսկ սկզբունքի անսակէտից, որոշ վարձատրութեամբ ուսանողներին հրաւիրելու համար մենք ոչինչ չենք կարող ասել, քանի որ չգիտենք թէ ինչպէս են ասորում մեր գիւղացիք. իսկ այդ ուսանողների համար ևս կարող է օգտակար լինել:

Այդ գրօսանքներն իրենց առողջապահական նշանակութեան հետ միասին կարող են ծառայել և իբրև նիւթ փորձնական ուսումնասիրութեան համար: Բայց նօքա պէտք է անմատչելի լինեն ծոյլ, անկարգ և անհնազանդ աշակերտների համար. ի դէպ, այս վերջիններին պէտք է բժշկին ներ-

կայացնել. նայեցէք այդ մասին մեր «Առողջ և հիւանդ երեխայի հոգին» գիրքը:

Ուսուցիչը պէտք է հսկէ այդպիսի աշակերտների վրայ դասամիջոցների ժամանակ, նա յատկապէս պէտք է հսկէ այն աշակերտների վրայ, որոնք նրա թուլութեամբ յաճախ դուրս են գալիս դասարանից:

Լաւ ուսուցիչը պէտք է աւելի յաճախ լինի այդպիսի աշակերտների ընտանիքում, որպէս զի կարողանայ իմանալ, ուսումնասիրել նրանց ծուլութեան, անկարգութեան հիմնական պատճառները, իւր աշակերտների պակասութիւններն ուղղելու և նրանց վարքը լաւացնելու համար: Ուսուցչի և աշակերտների ծնողների մէջ որքան աւելի մտերմութիւն լինի, այնքան աւելի լաւ, ուսուցիչը կարող է ամեն մի տան ցանկալի հիւրը և բարեկամը համարուել:

Հէնց որ գիւղում դպրոցը բացուի, ուսուցիչը քահանայի հետ ձեռք ձեռքի տուած խօսոյն կարող են մի քանի 2—3 գիւղի ակառաւոր մարդկանց հրաւիրել մի փոքրիկ հիւանդանոց հիմնելու համար, ամենապակասը 7 մահճակալով, այդ ժամանակ կյալանուի և բժիշկը. մենք դեռ հեռու ենք իսկական զեմօտուոյից, իսկ դպրոցներ ամենուրեք բացուած են արդէն: Ահագին կուլտուրական նշանակութիւն ունի հիւանդանոցը. նախատիպ կարող է համարուել Ախալցխայի հիւանդանոցը, որ Ախալցխայի պարծանքը կարող է կոչուել. արժէ սասն և երկու հազար: Հարկաւոր է միայն ինիցիատիւա,

պատճառ ցանկութիւն եղած ժամանակ կարելի է կառուցանել փոքրիկ հիւանդանոցներ: Ահա և կաակների համար մի նոր ասպարէզ:

ԴՊՐՈՅԱԿԱՆ ՀԻՒՄՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Աշակերտներին չատուկ են շատ զանազան անասակ հիւանդութիւններ, ինչպէս բորբոսային (պարազիտ), վարակիչ, նոյնպէս և նմանութեամբ՝ ազդեցութեան ենթարկուելով վարակող, բժաւոր և չերմի հիւանդութիւններ, որ առաջ են գալիս վատ կահկարասիքի և լոյսի ազդեցութիւնից, ինչպէս օրինակ ողնաշարի ծաուէլը և աչքի հիւանդութիւններ:

Իպրոցական՝ — դասարանի կարասիքի մասին շատ անգամ է է զրուել, կասենք միայն, որ աշակերտի իրանի անկանոն պրութիւնը, վատ և անկանոն շինուած սեղանի շնորհիւ հասցնում է այն հետեանքին, որ ծաւում է աշակերտի ողնաշարը և նրան անկանոն կերպով զարգացնում:

Մի տեղանի սեղանը, որ յարմարեցրած է ամեն մէկ աշակերտի համար, այդ չարիքների առաջին ամենալու ամենալու միջոցն է ներկայացնում: Այն պէտք է իւր չափերով համապատասխանէ աշակերտի կազմուածքին և չտիպէ վերջինիս կռնալու նրա վրայ: Պիւպիտեր — սեղանի տախտակը պէտք է աշակերտի աչքից չափուած հաւասար հեռաւորութեան վրայ լինի: Այն պէտք է շարժա-

կան լինի, այսինքն հարկաւոր չափով բարձրացող և իջնող: Ուսուցիչը պէտք է աշակերտներին նստացնէ նրանց հասակի համեմատ, այնպէս որ հասկանալի է, որ բոլոր սեղանները միևնոյն բարձրութեան չպէտք է լինեն:

Իպրոցը պէտք է կառուցուի, յարմարեցնուի, կահաւորուի բոլոր կանոններով, այն պէտք է ապահովուած լինի բոլոր նորագոյն յարմարութիւններով:

Սակայն այս բոլորը բաւարար չի լինի և աշակերտների առողջութիւնը լուրջ կերպով վտանգուած կլինի, եթէ ուսուցիչն իւր անփութութեամբ ուշադրութիւն չդարձնէ մաքրութեան և աշակերտների կանոնաւոր նստուածքի վրայ, եթէ պարապմունքների և հանգստութեան ժամերն այնպէս բաժանուին, որ առողջութեանը վնասն, եթէ պատիժների ի շարք դորժ գնելն սկսէ սարսափ ազդել և ննշել երեխաներին, կամ թէ ուսուցչի թուլութիւնն ու բնաւորութիւնից զուրկ լինելը հոսցնի այն աստիճանին, որ աշակերտներն իրենց պահեն այնպէս, ինչպէս խելքներին կփչէ:

Իպրոցն առողջ և երեխաներն անփտանդ կլինեն այն ժամանակ, երբ ուսուցիչը ոչ մի բուպէ չմոռանայ, որ ինքը պարտական է հոգալու աշակերտների ոչ միայն հոգու, այլ և նրանց մարմնական քնքոյշ գործարանների պահպանութեան համար, որ կարող են գոհ գնալ այս կամ այն պատահարներին, և եթէ ուսուցիչը աշակերտների ֆիզիկական հաւասարակշռութիւնը պահպանելու

համար նոյն չափ չլարի իւր ոյժերը, խելքն ու զիտութիւնը, ինչպէս և առհասարակ դաստիարակութեան գործի համար:

Բացի մանկավարժութիւնից ուսուցիչը պէտք է իմանայ առողջապահութեան հիմունքներն ու հոգեբանութիւն: Այսպէս թէ այնպէս, կրկնում ենք, որ լուրջ պրոֆիլակտիկայի — նախազգուշացման տեսակէտից բոլոր դպրոցներում անհրաժեշտ է մտցնել իսկական բժշկական հսկողութիւն:

Մեր մեծ քաղաքներում պէտք է կազմակերպել ամեն տարի, 6 — 8 շաբաթեայ դասախօսութիւններ այս հարցերի, այս առարկաների նկատմամբ և թող հէնց իրենք այն ուսուցիչները, որոնք համակուած են այս գաղափարներով իսկապէս իրականացնեն այս միտքը:

Մենք այժմ լիշէնք դպրոցաւան մասնաւոր հիւանդութիւնները, հասկանալի է, որ չենք կարող կանգ առնել այդ հիւանդութիւնների մանրամասնութիւնների վրայ:

Ամենքին յայտնի է, որ աշակերտները շատ չաճախ տանջուած են կարճատեսութեամբ, և այդ հիւանդութիւնը յաճախ տղաների մէջ է պատահում, քան թէ աղջիկների մէջ: Կարճատեսութիւնը գլխաւորապէս առաջ է դալիս այն անբաւարար պայմանների շնորհիւ, որոնց մէջ աշխատում է աշակերտը, երբ նա աշխատում է այնպիսի առարկաների վրայ, որ նրան շատ մօտիկ են դտնւում:

Պակաս լուսաւորութիւնը, զրքերի վատ տպագրութիւնը, բնթերցանութեան և զրկու ժամա-

նակ գլուխը սեղանի վրայ շատ թեքելու սովորութիւնը, ահա կարճատեսութեան ստեղծող պայմանները: Մի անգամ ևս պէտք է ասել, որ աչքերին ժամանակից առաջ, երբէք աշխատանք չպէտք է տայ: Կանոնով քանի էրեխան չի անց կացրել 6, 7 մինչև 8 տարին, չպէտք է թող տայ երկար բնթերցանութեամբ կամ գրով զբաղուելու: Ինչպէս վերևն ասուած է, տարբեր աշխատանքների տեղութեան միջոցները դանազան են լինում, նայած էրեխայի հասակին:

Անհրաժեշտ է յաճախ բնդհատել ուսու մնական պարապմունքները դասամիջոցներով. ճիշտ այնպէս և դասի ժամանակ նպատակաշարժար է աչքերին մի քանի րոպէ հանդիստ տայ: Բացի այդ պէտք է լաւ սեղաններ և նստարաններ լինեն: Պէտք է հետևել, որ գրութեան ժամանակ էրեխաները դուրսնեն ու իրանները չթեքեն դէպի ծախ, որովհետև այդ որոշ չափով նրանց շիլ է դարձնում:

Ընթերցանութեան զրքերը պէտք է մաքուր և խոշոր տառերով տպուած լինեն: Թուլթուր անպոյժման սպիտակ պէտք է լինի, որպէս զի նրա վրայ որոշակի աչքի զարկի տիպը:

Լուսաւորութիւնն առատ պէտք է լինի և կարելուոյն չափով ձախ կողմից. աւելի լաւ է ելէկարական լուսաւորութիւնը... Ակնյայտնի կարճատեսութեան ժամանակ անհրաժեշտ է բժշկի խորհրդին դիմել:

Կարճատեսութիւնից յետոյ երկրորդ տեղը բռնում է ողնաշարի կորութիւնը — սկոլիոզ:

Բացի իսկական պատճառներից, որոնք տրամադրում են և նպաստում այդ կորութեանը, կան և երկրորդական պատահական պատճառներ: Վերջիններիս են պատկանում այն անկանոն զրութիւնները, որ ընդունում են երեխաները դասարանում պարապելիս — գրելիս, ձեռագործներ անելիս, երաժշտական գործիքների վրայ նուագելիս, ևս առաւել, երբ երեխան կարճատես է լինում:

Ողնաշարի կորանալու դէպքում փոքրանում է է կրծքի վանդակի տարածութիւնը, խանգարում է թոքերի արեան շրջանառութիւնը, զարգանում են սրտի հիւանդութիւնները, մարսողութեան դորձարանի գործողութիւնը խանգարւում է, նրանց սեղմուելու պատճառով: Յաճախ տուժում է ամբողջ անդամութիւնը և հիւանդը սակաւ առ սակաւ սկսում է նիհարել:

Դպրոցական հիւանդութիւնների մէջ երրորդ տեղը բռնում է գլխացաւը: Եւ իսկուպէս, դպրոցի պարտաւորեցուցիչ աշխատանքը, դրա ժամանակ ուղեղի գործունէութիւնը, իրանի դրութիւնը, դասարանի տաք և փչացած օդը, այս բոլորը կանխապէս տրամադրում են հիւանդական քայքայումների, որոնց հետեանքն է լինում արեան հոսանքը դէպի գլուխը, քթից արիւնահոսութիւն, ինչպէս որ հաստատում է պրոֆեսոր Մոսսոն:

Անշարժութիւնը, մարզանքների անբաւարարութիւնը, կամ կատարեալ բացակայութիւնը, դասարանների չափից աւելի լիքութիւնը, ծանձրոյթն ու թախիծը (այս վերջին պատճառները խանգարում են

ընդունում են ասորժակն ու մարսողութիւնը), նիհարելը, նուագելն ու փչացած օդ շնչելը թոքախտ հիւանդութեան ամենազլխաւոր պատճառներն են դառնում:

Այս բոլորը ծառայում են իբրև նախազգուշացնող (պրոֆիլատիկական) միջոց հիւանդութեան դէմ, որի առաջն առնելու համար անհրաժեշտ է գլխաւորապէս հանդիստ, խաղեր և թարմ օդի մէջ մարմնամարզութիւն:

Ի դէպ, այստեղ ասենք, որ դերմանական պրոֆեսոր Բերինգ, որ բկացաւի (դիֆտերիա) դէմ շինուկ գտաւ, համարեա թէ դրականապէս կարելի է ասել, որ թոքախտի դէմ ևս նա միջոց է դրել. Կասկած չկայ, որ թոքախտի դէմ մաքառելու համար գլխաւոր դերը միշտ պէտք է կատարէ առողջապահական կեանքը:

Թոքախտին շատ թէ քիչ մօտ է և գեղձախտ (զօլօտուխտ) հիւանդութիւնը. (տես իմ «Գեղձախտ» գիրքը), որի պատճառները զրեթէ նոյնն են, ինչ որ թոքախտի պատճառները: Պէտք է իմանալ, որ թէ գեղձախտը և թէ թոքախտն ունեն իրենց զարգացման ընթացքը և նրանք զանազանում են իրարից:

Թէ վարակիչ, թէ բորբոս (պարազիտ) և թէ ոչ պարազիտ հիւանդութիւնները մեծ վնասներ են պատճառում. դժբախտաբար ուսուցիչը կոմպետենտ — գիտակ լինել չէ կարող, զոնէ այդ հիւանդութիւնների հիմքը ճանաչելու և որոշելու մէջ: (Տես իմ յօդուածները «Առողջապահիկ» թերթում

և ուրիշ գրքերը) այս տեսակ հիւանդութիւնները կարգին են պատկանում քոսը, սարիգուշէի լիշայ (արիսօֆիտոն), քեաշայ հիւանդութիւն, ոչլոտութիւն, կարծրուկ, բկացաւ (դիֆտերիա) և կարմրախա, թեթե ծաղիկը, խոզախտը, կապոչտ հագր, սիֆիլիս և այլն: Պէտք է իմանալ, որ կարմրախտ (սկարլատինա) ունեցող երեխաներին պէտք է դպրոցից հեռացնել, դպրոց չթողնել 30 օր. կասկած չկայ, որ այդ ժամանակ հարկաւոր է բնդհանուր արտահանութիւն: Կարծրուկի համար 16 օր., ծաղիկ և խոզախտի ժամանակ տասը օր. դիֆտերիաի ժամանակ քառասուն օր, կապոչտ հագրի (կոկլիւշի) ժամանակ աշակերտին դպրոց չպէտք է թողնել մինչև երեք շաբաթ, երբեմն մինչև երեք ամիս, զուցէ և աւելի:

Մի անդամ ևս թույլ ենք տալիս մեզ ասելու, որ անհրաժեշտ է զիտակցել բժշկական և առողջապահական հակողութեան օգտակարութիւնը, որովհետև դպրոցական առողջապահութեան վերաբերեալ բոլոր հարցերը միայն և միայն դպրոցական բժշկի կոմպետենցիայի գործն է:

Բժիշկները կարնդ են դպրոցական այցելութիւնների մէջ խիստ կարգ սահմանել և մասնաւորապէս զբաղել աշակերտների հասակի, քաշի, կրծքի շրջապատի և լայնութեան ուսումնասիրութեամբ, ծանօթանալու համար աշակերտների մարմնի կազմութեան և նրանց առողջութեան հետ:

Դեռ 1893 թւին պրոֆ. Լեախու շատ նիշտ

և սուր կերպով, դպրոցական առողջապահութեան ժողովի ժամանակ ասել է, որ ամեն մի աշակերտ, դպրոցում սովորելու ժամանակ, պէտք է ունենայ իւր բժշկական վկայականը:

Այդ վկայականը կարող է մեծ ծառայութիւն անել ու այն, աշակերտի երեխայութեան հասակի կանոնաւոր և հիւանդական դրութեան նիշտ, միևնոյն ժամանակ պերնախօս չիշատակարանն և ցուցակը կը լինի:

ՄԱՐՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Մանկութիւնն առանց զուարճութիւնների միտք չունի: Դասամիջոցները նրա համար անպաշտան անհրաժեշտ են. այն, երեխաներին թէ հանգստութիւն և թէ բաւականութիւն է պատճառում:

Մարմնական մարզանքները (տես իմ «Մարմնամարզութիւն» գրքուկը) նպաստում են մարմնի զարգանալուն, որը իւր հերթին ներկայանում է այն պայմաններից և միջոցներից մէկը, որի մէջ զարգանում են մարդու հոգևոր և բարոյական շատ կութիւնները, որովհետև նրանք բնորոշակ են ծաղկելու միայն առողջ և պինդ մարմնի մէջ:

Մարմնամարզութեան բացակայութիւնը երեխային թմրեցնում, զայկայցնում է, իսկ առատութիւնը, ինչպէս ասում է Փարիզի բժիշկ Լագրանտ, խանգարում է նրա աճելու կանոնաւոր ընթացքը:

Այս նշանակում է, որ մարմնամարդական վարժութիւնները, երեխայի ֆիզիկական զարգացման համար, կարող են կամ բարերար և կամ թէ վնասակար ազդեցութիւն ունենայ:

Բնական մարմնամարդութիւնը, երեխայի համար, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի շարք վարժութիւններ, կամ խաղերի ընտրութիւն և կամ թէ մի զուարճութիւն: Իսկ զանազան մարմնամարդական զործիքների (տրապեզի և այլն) վրայ կատարած վարժութիւնները դժուար են և երեխաներին դիւր չեն գալիս:

Երեխայի անընդհատ շարժումների և գործունէութեան կարիքը պայմանաւորուած է նրա մաքի յաճախակի հանգստութեամբ. այդ պատճառով, կրթելու ժամանակ, անհրաժեշտ է այնպէս անել, որ երեխան կեանքի մեծ մասը մաքուր օդի մէջ անց կացնի և ֆիզիկական վարժութիւններով, որպէս զի, իրենց կրթութեամբ նրանք լինեն արի, բարեկազմ և հայրենիքին օգտակար մարդիկ:

Շարժումները երեխայի աճեցողութեան պայմաններից մէկն են և գործունէութեան այդ անհրաժեշտ կարիքը պէտք է յարգուի մինչև անգամ դասարանի մէջ:

Մարմնական մարզանքների հետեակամտութիւնն ու ժամանակը վերջապէս երեւի օրէնքով կը սրբազործուին: Պէտք է կանոնաւորել գործունէութիւնն, այն սգտակար դարձնել հէնց կրթութեան օգուտի տեսակէտից և գործադնել նոյն իսկ դպրոցի ուսմանական կեանքում:

Կարգապահութեան տեսակէտից, ընդհանուր կրթութեան մէջ, էական տեղ է բռնում դպրոցում երգեցողութեան դասը:

Երաժշտութիւնը, դպրոցական միւս պարապմունքների մէջ տեղ բռնելով, ի հարկէ այնպիսի պայմաններում, որ բաւականութիւն տայ երեխայի կատեփկական ճաշակին, կստիպի նրան սիրել դպրոցը, այն պարապմունքները, որոնց մէջ երգ կայ և նրան սովորեցնող ուսուցիչներին:

Մտաւոր տեսակէտից, երաժշտութիւնը նպաստում է մարդու հոգու բարձրանալուն և էստետիկական ճաշակ է տալիս դէպի աշխատանքն ունեցած սիրուն, որ իւր կողմից շատ բազմատեսակ կերպով ծառայում է այդ միւսնոյն ճաշակի դարգացման:

Բարոյական տեսակէտից, երիտասարդութեան համար, երաժշտութիւնը ուրիշ վնասակար զուարճութիւնների առաջն առնող մի շատ զօրեղ միջոց է (տես մեր «Մտերմական խորհուրդներ պատանիներին» գրքուկը):

Երգը երաժշտութիւնից աւելի է ազդում մարդկային հոգու խորութեան վրայ և մարդկային հոգին աւելի դիւրազգաց է դարձնում բարու և գեղեցիկի համար: Վերջապէս նկատուած է, որ երգիչները, միայն երգի մէջ վարժուելով, ունենում են բաւականին զարգացած և մեծ կուրծք:

Փրանսիական դպրոցներում, շաբաթական մէկ կամ երկու ժամ երգեցողութեան դասեր են նշանակուած, անկախ այն երգերից, որ ամեն օր լի-

նում են դասերի սկզբին և վերջին: Բացի այդ, գրեթէ ամեն դպրոց ունի իւր փոքրիկ երաժշտական խումբը, որոնք զիւղերում, փոքրիկ քաղաքներում յաճախ համերգներ ու կոնցերտներ են տալիս, վերջապէս մեզանում այդ խմբերը կարող են երգել եկեղեցիներում: Որքան սիրուն է, երբ երկու սեռից խումբը միասին երգում են. ծնողներն էլ իմանալով, որ իրանց երեխաներն երգում են եկեղեցում, աշխատում են անպատճառ ներկայ գտնուել, իրենց զաւակների ձայնով հիանալու համար:

Ընդունելով երգեցողութեան օգտակարութիւնը, մի անգամ ևս նկատենք, որ երգեցողութիւնը, խաղերը, դասամիջոցներն ու մարմնամարզութիւնը ամենալու միջոցներն են մարմնի զարգացման համար, որովհետեւ նրանց շնորհիւ երեխայի գործունէութիւնն ու շարժումների պահանջը իսկապէս բաւարարութիւն է ստանում:

Իսասամիջոցն այն ժամանակն է, երբ աշակերտն ազատ է դասարանի մտաւոր աշխատանքից, երբ նա կատարելապէս ազատ է և կարող է նուիրուել ամեն տեսակ խաղի ու զուարճութեան, որոնք միևնոյն ժամանակ և խաղ են և զբաղեցնում են նրա միտքը, քանի որ հէնց այդ խաղի մէջ հանդէս են գալիս և նրա մտաղ երեակալութեան թռիչքները:

Այստեղ վարժում է նրա հնարագիտութիւնը, խմբակցում է իւր ազատ կամքով, ազատօրէն նեթարկում է իւր երեակալութեան քմահաճօրնեցիքն: Նաականայի է, որ դասամիջոցներն առանց

խաղերի անպէտք են և անօգուտ: Պէտք է խիստ աչալըջութեամբ հետեւել այն երեխային, որ դասարանից դուրս առանձնանում է և չէ կամենում խաղալ:

Իոկտօր Պեկօ ասում է. — խաղը երեխայի կեանքի կէսն է: Երեխան, իւր ամենաքաղցր և ամենաբնական ընդունակութիւնները, միայն հնարաւորութիւն է գտնում արտայայտելու այդ խաղի մէջ: Միայն դորանով է կարողանում նա բաւակաւնութիւն տալ իւր մի քանի ամենաէպկան պահանջներին:

Երեխայի համար, խաղը միայն, մկանները վարժեցնելու, արիւնք նորոգելու և եռանդը աւելացնելու միջոց չէ. ոչ, խաղը, այս մի խօսքով ամբողջ երեխայի հոգին է, որ արտայայտուում է նրա մէջ ու յայտնում իւր բոլոր անօրինակ գեղեցկութեամբ:

Կրթութեան մէջ խաղին պէտք է հնար եղածին չափով մեծ տեղ տալ, առանց խանգարելու դասերը. բայց երբէք չափից չպէտք է անց կենայ. ամեն բանի մէջ չափ ու սահման կայ!...✓

Զխաղացող կամ քիչ խաղացող երեխան եթէ հիւանդ չէ, կարող է հեշտութեամբ հիւանդանալ:

Մի անգամ չի ասուած, թողէք երեխան բարձր ձայնով կանչէ, ծիծաղէ, երգէ, վազէ, ազատ կերպով թռչկոտայ, վերջապէս խաղալ: Այս բոլորը նրա համար անհրաժեշտ են, որովհետեւ շատ բնական է:

Կանոնաւոր մարմնամարզութիւնը, ինչպէս

այն լինի, երբէք չպէտք է ոչնչացնէ խաղերը, որոնցով երեխաները, բոլոր տարիներում, հնարաւորութիւն ունեն ամեն կերպ զուարճանալու:

Անգլիացիներն ու ամերիկացիներն այդ լաւ գիտեն և իրականացնում են կեանքի մէջ: Նրանցում խաղը՝ ազգային մի աւանդ է: Խաղերից ամենալաւ խաղերը նրանք են, որոնք կատարում են բացօթեայ, որովհետև աշակերտներին վարժեցնում են և բնութեան եղանակի փոփոխութիւններին և այլն:

Ուսուցիչները կարող են հսկել դպրոցներում կատարուած խաղերի վրայ. ևս առաւել լաւ է լինում, երբ ուսուցիչները ղեկավարում են այդ խաղերը, կամ թէ իրենք մասնակցում են նրանց մէջ: Ինչգիտալով, ուսուցիչները պարտական են դպրոցում աշակերտներին խաղեր սովորեցնել, որի շնորհիւ աշակերտներին և ուսուցչի մէջ առաջ է դալիս ու զարգանում բարեկամութիւն, համակրանք և յարգանք:

Խաղի դասն, ամենից առաջ, պէտք է զուարճութեան առարկայ լինի: Խաղի ժամանակ, երբ երեխան անձնատուր է լինում խաղին, պէտք է ազատ կերպով կանչէ: Պէտք է ասել, որ աղաղակը միայն ուրախութեան արտայայտութիւն չէ, այն, շնչատուութեան մարզանքի ամենաօգտակար գործողութիւններից մէկն է:

Որքան կարելի է աւելի շարժումներ, հնար եղածին չափ աւելի ուրախութիւն և աւելի աղ-

մուկ, այս է երեխայի վարժութեան ու մարզանքների ֆորմուլան, ասում է Լազրանժ:

Երեխան պէտք է ազատ լինի խաղի միջոցին ազատակեղու, բարձր ձայնով ծիծաղելու, որովհետև նրան յատուկ է ծիծաղելը. այն, նրա հասակի բնորոշ յատկանիշներից մէկն է և այնպէս անհրաժեշտ, ինչպէս լույսը անհրաժեշտ է բուսականութեան համար:

Խաղերի ժամանակ, անխուսափելի կերպով, ընդհարումներ և վիճարանութիւններ են լինում: Խաղերի ժամանակ բանն առանց հարուածի ու հրելու չի վերջանում. բայց երեխային ամրապնդելով նրան աւել արի ենք դարձնում, փրկում ենք նրան վախկոտութիւնից և զօրեղացնում նրա կամքը...

Վերջերքս, այս թուականի հոկտեմբեր ամսին, անգլիական զինուորական նախարարը եռանդուն կերպով պահանջում էր, որ մինչև անգամ անգլիական աշակերտներին սովորեցնեն հրացանածղութիւն: Նա ենթադրում է, որ դրանից աւելի լաւ և աւելի շատ արդիւնք կարող է ստացուել, քան թէ ընդհանուր զինուորակոչից: Նոյն իսկ խաղաղ ժամանակ, որքան շատ քաջարի մարդ լինի պետութեան մէջ, այնքան աւելի լաւ: Այն ամենը, ինչ որ պնդացնում է մարմինը, լաւ է երեխայի համար, հետեւապէս և աւելի լաւ նրա հայրենիքի համար:

Մենք պարտական ենք և պէտք է կատարենք մեր քաղաքացիական պարտականութիւններն, այսինքն ղէպի զինուորակոչն ունեցած պարտակա-

նութիւնը: Մեր երեխաները, դպրոցում, մի անգամ գէթ հրացանին նայել վարժուելուց յետոյ, 21 տարեկան հասակում, այլ ևս չեն խուսափի զինուորական ծառայութիւնից. չեն վախենալ, չեն մոռանալ, որ զինուորական ծառայութիւնը ամրացնում է մարդուն, հետեապէս, զինուորական ծառայութիւնն այն գործոններից մէկն է, որ անականութիւն և պնդութիւն է տալիս մարդուն *):

Այսպէս, տեղն ու տեղը, դպրոցում կատարած մարմնամարզութիւնն այնպէս պէտք է կատարել, ինչպէս ցոյց է տուած մեր «Մարմնամարզութիւն» գրքոյկին կից նկարի մէջ: Անհրաժեշտ են լողալու վարժութիւններ (ուսուցիչը պէտք է այդ մասին ծնողներին խորհուրդ տայ. այս արդէն ընտանեկան դաստիարակութեան գործն է), յետոյ զինուորական մարմնամարզութիւն, վաղ ընկնել, գնդակախաղ, սերսո, ցատկել, կեղլի, աչքակապուկ, կրօկեա, պարեր, քայլել, հասարակ գրօսանք, զրպրոցական գրօսանք, դպրոցական ճանապարհորդութիւններ և այլն:

Այս բոլոր խաղերը ընդունուած են թէ զրպրոցում և թէ գպրոցից դուրս: Սորա գասերից ազատ ժամանակում մեծ մասամբ շատ օգտակար վարժութիւններ են ներկայացնում աշակերտների

*) Հոկտեմբերի 17-ի հրովարտակից յետոյ, ամենայն հաւանականութեամբ, կովկասեցիները զինուորական ծառայութիւնը կը կատարեն կովկասի շրջանում, որ շատ ցանկալի կը լինի:

համար: Այս խաղերն օրիորդների համար ևս նոյնչափ անհրաժեշտ են, որչափ և տղաների համար:

Երբէք չպէտք է մոռանալ, որ զօրով երեխային ստիպել այնպիսի վարժութիւն կատարել, որ բոլորովին չի հետաքրքրում նրան, նշանակում է ոչ միայն անուշադիր գտնուել դէպի երեխան, այլ և միանգամայն առողջապահական սխալ կատարել:

Երեխան մարմնամարզութեան կարիք է զգում: Եւ պէտք է, որ այդ մարմնամարզութիւնը նրա համար հաճելի լինի և կատարուի մաքուր օդի մէջ և ընդհատուծներով: Նա մի կողմն է թողնում ստիպողականութիւնն ու չափազանց խիստ կարգապահութիւնը: Մի խօսքով, այն կատարելու համար, առանձին դժուարութիւններ չպէտք է ներկայացնել:

Մարմնական կատարելագործութիւնն ապահուում է բարոյական կատարելագործութիւնը:

Հաւատացէք, եթէ դուք կամենում էք կրթել լայն սիրտ բնաւորութիւն (և դուք պարտական եք), այնպիսի մի անձնաւորութիւն, որ ունենայ ազնիւ և անվախ հոգի, մեծ գործեր կատարող և անդադրուն աշխատող մի մարդ, ապա ամենից առաջ կրթեցէք մարմինը՝ խոշոր, պինդ և զիմացկուն:

ԴՊՐՈՅՍ.ԿԱՆ ԶԲՕՍԱՆԻՔ

Մենք արդէն մեր միւս գրքերում ասել ենք, թէ ման գալն ինչ ազդեցութիւն է անում օրգանիզմի վրայ, այսինքն թէ ինչպէս է ազդում մարմնամարդութիւնը մաքուր օդի մէջ և արևի տակ: Քաղաքից դուրս կատարուած գրօսանքները, երեսաներին առիթ են տալիս խաղալու, թուչկոտելու, վազելու արևի տակ և լոյսի մէջ:

Նոքա աւելի օգտակար են օրիորդների համար, որովհետև ազան, այսպէս թէ այնպէս, միշտ հնարաւորութիւն է գտնում վատ բնակարանի ազդեցութիւնից և հիւանդոտ կեանքից խուսափելու: Նա դուրս է գալիս, վազվզում է փողոցներով, այս ու այն կողմն է բնկնում և աւելի շատ բաց օդի մէջն է անց կացնում:

Աղջիկն ընդհակառակը, չորս պատի մէջ փակուած, տեղից չի վեր կենում, «գատապարտուած ամեն զրկանքի», այդ պատճառով և կազմուածքով թոյլ է ու անկարող: Բացի այդ, դասերից ազատ օրերին, ևս առաւել զիւղերում, շատ երեխաներ օգնում են իրենց ծնոյներին և իսկապէս թեթև ծառայի դեր են կատարում, որոնց երբեմն ստիպում են վերցնել ամենաճանր իրեր:

Զրօսանքների շնորհիւ երեխաները կազատւեն այդ բոլոր ծանրութիւնից և կօգտուեն առողջարար մարզանքներով:

Շէշցարիայում, զպրօցական գրօսանքներ գոյութիւն ունեն և քաղաքացիական իրաւունք են

մեռք բերել: Բայց աշակերտներն այդ գրօսանքներից կամ նանապարհորդութիւններից ոչ մտաւոր և ոչ էլ բարոյական օգուտ կարող են ստանալ, եթէ ուսուցիչն անտարբեր և սառը վերաբերուի գործին:

Լաւ կատարուած ճանապարհորդութիւնների հրաշալի կրթական միջոցներ են ներկայացնում: Նոքա որոշ նպատակ են ունենում, ինչպէս օրինակ որևէ պատմական չիշատակարան, գործարան, զիւղատնտեսական հաստատութիւն, ջուր մատակարարող մի մեծ աղբիւր կամ ջրմուղ զիտելը և այլն:

Նոյաչափութեամբ պարապելը, որևէ տեղի չատակապիծ կազմելը, ծաղիկների ու բոյսերի ժողովածու (հերբարիում) կազմելը, դպրոցական թանգարանների համար նիւթ ժողովելը, զիւղական կեանքի հետ ծանօթանանալը, այս բոլորը, միաժամանակ, թէ կրթող և թէ առողջարար վարժութիւններ են աշակերտների համար:

Առանց չորհածութեան, առանց չարչարանքի, միայն տեսողութեան և շոշափելիքի միջոցով, այսպիսով ո՛րքան օգտակար տեղեկութիւններ կարելի է մեռք բերել:

Երեխաներին ո՛րքան հետաքրքիր չաւելուածներ կարելի է ցոյց տալ նրանց միտքը լուսաւորելու համար: Երբ որ նրանց մարմինը կամրայնուի, նրանք արդէն հնարաւորութիւն կստանան առանձին հաճոյքով, մեծամեծ օգուտներ քաղելով, զբաղուել մտաւոր աշխատանքով:

Ի պրոցական ճանապարհորդութիւնների համար առանձին դրամական միջոցներ են հարկաւոր, թէ աշակերտների և թէ դպրոցի կողմից: Այդ ճանապարհորդութիւնները կարող են կազմակերպուել ըստ պարային վարչութիւնների առատածեռն աշակցութեամբ: Եւէլցարիայում արդէն մի քանի քաղաքներ, իրենց տարեկան նախահաշուի մէջ, անհրաժեշտաբար որոշ գումար են մտցնում այդպիսի ճանապարհորդութիւնների համար:

Որովհետեւ այդ դպրոցական ճանապարհորդութիւնները տեղի են ունենում ուսման ընթացքում, երկարատեւ ամիսների միջոցին, կամ ուսումնական տարուայ վերջում, այդ պատճառով նրանք, մտաւոր յոգնածութեան առաջն առնելու համար՝ հիանալի միջոցներ են ներկայացնում:

Մաքուր օդի մէջ անցկացրած կեանքը, տեական ման գալն ու առողջ յոգնածութիւնը նոյնչափ օգտակար են Ֆիզիկական դարգացման համար, որչափ և ընդունակ են առժամանակեայ ճնշուած մարդկային մեխանիզմին գարծնելու նրա ճկունութիւնն ու ազատութիւնը:

Վերջապէս ճանապարհորդի կեանքը աշակերտի մէջ զարգացնում է ամենակէական յատկութիւնները. մտցնում է նրա մէջ նախածեռնութեան և վճռականութեան ոգին, զարգացնում՝ դիտողականութիւնը, նրբացնում է հաշակը և արթնացնում է սէր՝ գէպի բնութիւնը *):

*) Կարգացէք Լէօի «Ցասն օր Անիում», հիանալի տողերը, որ ամառը տպուեց «Մշակի» մէջ: Առանձին զըր-

Ծնողները պէտք է ուրախ լինեն այդպիսի ճանապարհորդութիւնների համար, նրանք պէտք է օժանդակեն և երբէք չպէտք է վախենան: Մենք ասում ենք, որ աշակերտները պէտք է զէնք գործածել իմանան: Թող նրանք զինուեն ով ինչով կարող է: Ինքնապաշտպանութեան համար անհրաժեշտ է զէնքը. զէնք բանեցնել իմացողը վախկոտ չի լինի:

Կան և այսպէս կոչուած ամառնային գաղութներ. — սօքա յատուկ զովասանքի արժանի մի ձեռնարկութիւններ են, որ հանդէս եկան վերջին տարիներին: Այս ձեռնարկութիւնները լաւ ապացոյցներ են այն բանի, թէ բարեգործական ընկերութիւններն ինչ չափով մասածում և հոգս են տանում չքաւոր դասակարգի զաւակների մասին:

Ամառնային գաղութների նպատակն է, մի քանի շաբաթով, հիւանդ, թույլ կազմուածքով ու խեղճ երեխաներին, ուղարկել քաղաքի սպանիչ մթնոլորտից հեռու, սարերը, անտառը կամ թէ չէ ծովափնեայ մի տեղ:

Ուսուցչի կամ վարժուհու հսկողութեամբ երեխաներին ուղարկում են գիւղերը, լիքը կրճքով շնչելու գիւղական առողջարար օդը:

բոլորով շուտով լոյս կը տեսնի, հեղինակի յաւելուածով, տիկ. Զաբէլի էժանագին դրադարանի զըբերի շարքում: Հէնց նոյն ամառ, հրաշալի նկարագրութեան շնորհիւ, «Անի» անունով մի ընկերութիւն կազմուեց, որ իրեն նպատակ դրեց ուսումնասիրել մեզ համար այդ նուիրական բաղաբը:

Այս ամառնային գաղութներն անպայման ազգուժում են փոքրիկ գաղթականների առողջութեան լաւանալու վրայ: Եւ ահա երբ դպրոց են վերագառնում խելացի կերպով կրթուած, լաւ սրնւած, լողացուած, բախտաւոր ու իրենց վիճակից զօհ, կարծրաթուշ ու լայն կրծքով, պայծառ, մաքուր գաղափարներով ու առողջ հասկացողութիւններով հարուստ գլխով, այն ժամանակ նրանք ներկայանում են այն «բախտազուրկները», որոնց նախանձում են մնացածները:

Գիւղում մնալով՝ նոքա ոչ միայն մարմնական առողջութիւն են ձեռք բերում, այլ և բարոյական:

Բնութեան ծոցում ապրած աշակերտը տուն է վերագառնում նոր զգացումներով, լաւ, ողևորւած հոգեկան արամազրութեամբ, մաքուր ու կազդուրուած և կրկնակի կապերով կապուած իւր ուսուցչի հետ:

Այս զործն ամեն կողմից միանգամայն արժանի է գովասանքի և կարող է միայն ամենացանկալի արդիւնքն ունենալ:

Բարերարների պարտականութիւնն է նեցուկ լինել հիմնելու այնպիսի ընկերութիւններ, որոնց նպատակն է օգնել այն չքաւոր աշակերտներին, որոնք ուսման ընթացքում կորցնելով իրենց առողջութիւնը, միանգամայն կարիք են զգում ամառուան ամիսներին, բնութեան ծոցում, վերականգնելու այն:

Զէ որ այժմ բացւում են մեր դպրոցները.

ամեն տեղ մեր ուշադրութիւնն ու մեր ոյժերը պէտք է կենդրոնացուեն մեր դպրոցների շուրջը: Մենք շատ ազքատ երեխաներ ունենք. ո՞վ պէտք է մտածի նրանց մասին, եթէ ոչ ինքը հասարակութիւնը: Այս գործում մեծ դեր կարող են կատարել և ծնողական ժողովները:

Ժամանակ է, որ արթնանանք!

ԾԱՌԱՏՆԿԻ ՏՕՆԸ

Ընդհանրապէս առողջութեան համար շատ օգտակար են և շատ արդիւնաւէտ ծառատնկի տօները, բայց դորա համար հէնց սկզբից նրանց պէտք է որոշ կազմակերպութիւն տալ և միայն այդ պայմանների մէջ այդ տօները մեր հայրենիքին կարող են մեծ ծառայութիւն անել, քանի որ մեղանում շատ տեղեր բուսականութեան և անտառի կարիք ունեն:

Եթէ ծառատնկի տօներին, հէնց նրանց սկսուելուց, հարկաւոր ուշադրութեամբ և եռանդով վերաբերուեն, ապա կարելի է չուսալ, որ աշակերտներին դորանով մեծ զուարճութիւն պատճառած կը լինեն, իսկ հայրենի երկրին զգալի օգուտ:

Մարդիկ բուսականութեան օգուտն սկսում են հասկանալ միայն այն ժամանակ, երբ նրանց ոչընչացնում վերջացնում ին: Այդպէս էր արեւմտեան Եւրոպայում, Ամերիկայում, նոյնը կատարւում է

մեզանուժ և կարելի է տեսլ, որ Ռուսաստանն ևս անց է կացնում այդ շրջանը:

Նատ ժամանակ չէ անցել, որ մեզանուժ՝ օրինակ Թիֆլիսում, փայտեղէն ամեն տեսակի նիւթի առատութիւն էր. բոլորովին անտարբար կոտորում ու շարդում էին անտառը, աւելի պարզն ասած՝ միայն նրանք չէին քանդում անտառը, որոնք ի բնէ ծոյլ էին:

Բայց երբ վառելափայտի և փայտեղէն միւս նիւթերի արժէքը բարձրացաւ մինչև այն աստիճանի, որ առաջ երազել անգամ չէին կարող, մարդիկ փոխեցին իրենց վերաբերմունքը դէպի անտառային բուսականութիւնը, սկսեցին աւելի խնայողութեամբ վերաբերուել դէպի անտառները, խնամել նրանց և տեղ-տեղ ձեռնարկեցին արհեստական անտառներ ամեցնելու:

Առհասարակ կրթութիւնն ու դաստիարակութիւնը մեծ դեր են կատարում անտառը պահպանելու և անտառի ծառերից անտեսապէս օգտուելու գործում:

Եւ իսկապէս եթէ մարդ մանկութիւնից սովորում է խնայողութեամբ վերաբերուել դէպի բոյսերը, եթէ նա իւր փոքր հասակում տեսել է, թէ ինչպէս դժուարութեամբ և որքան չարչարանք է հարկաւոր մի փոքրիկ կաղնի, խնձորենի կամ եղևնի անեցնելու համար, ապա ինքն ըստ ինքեան նրանում արթնանում է դէպի ծառերը եղած վերաբերմունքի մէջ խնայողութեան գիտակցութիւնը:

Ահա թէ ինչու դպրոցը, եթէ այս զգա-

ցուժներն արթնացնելու ամենափոքրիկ յարմարութիւնն ունի, կարող է և պարտական է նա զարթեցնելու այս գիտակցութիւնը իւր աշակերտների մէջ: Այս բանին հեշտութեամբ կարող են հասնել այն գործնական աշխատանքներով, որ աշակերտները կը կատարեն պարտիզում:

Բայց որովհետև դպրոցներից շատերը զուրկ են պարտեզներից, այդ պատճառով և մտածել են աշակերտների համար ծառատնկի տօնը սահմանել, որպէս զի նրանք տարեկան գօնէ մէկ կամ երկու անգամ հնարաւորութիւն ունենան ազատ օդի մէջ աշխատելու, սովորելով ծառ տնկելն ու նրանց խնամելը:

Ըստ ինքեան հասկանալի է, որ ծառատնկի տօներից օգուտ և առհասարակ օգտակար հետեւանք կարող է ստացուել միայն այն դէպքում, եթէ այն լաւ իրապօրծուի և հարկաւոր դեկավարութեամբ:

Այստեղ դպրոցի աշակերտներին մի կողմից յարմարութիւն է տրւում թարմ օդի մէջ ֆիզիկական վարժութիւններ անելու, իսկ միւս կողմից նրանց ծառ տնկելու և այն խնամելու մի քանի օգտակար դասեր է տրւում, որ յետոյ կարող է նրանց պէտք զալ:

Ամեն մի դպրոցում կատարւած այս աշխատանքից մեծ օգուտ կարելի է բերել հայրենիքին: Ամեն տարի հողի որոշ տարածութիւն կը ծածկուի ծառերով, դատարկ հողերի քանակութիւնը

կր քշանայ և սէր կր զարթնի զէպի բոյսերն ու նրանց զարգացումը:

Հէնց սկզբից պէտք է ուղղութիւն տալ այս գործին, որպէսզի նա միայն խաղ ու խաղալիք չհամարուի. ամենից առաջ այս գործի համար զեկավարներ են հարկաւոր:

Անհրաժեշտաբար գործին մօտ կանգնած զեկավարներ պէտք է լինեն միեւնոյն ուսուցիչները, քանի որ մասնագէտներ, ինչպէս՝ անտառապետ, պարտիզպան շատ հազուադէպ են լինում: Հասկանալի է, որտեղ անտառապետ կամ պարտիզպան լինի, նրանք չեն հրաժարուի զեկավարել ծառ տրնկելու գործում: Սակայն մեծ մասամբ ժողովրդական ուսուցիչները պէտք է վերահասու լինեն այս գործին:

Ամենից առաջ պէտք է ուշադրութիւն դարձնել ապագայ անկարանների տեղի վրայ՝ տեղի բնորութիւն անել: Այդ նպատակի համար մեզանում ամենուրեք հարկաւոր չափից աւելի ազատ հող կը ճարուի:

Գիւղերում, եկեղեցիների շուրջը, պատահում են դատարկ, պարապ գետիններ, զիւղերին կից լինում են բնդարձակ տեղեր, որ անասուններին անգամ սնունդ չեն մատակարարում, ձորերի մէջ, ագարակների մօտիկ, գերեզմանատների շուրջը պատահում են անմշակ տեղեր, վերջապէս զիւղերի ճանապարհները, որ այնպէս ծառերի կարիք ունեն. այդ ծառերն ամառը ստուեր կը տան ճամ-

բորդներին, իսկ ձմեռը ցոյց կը տան ծիւնով ծածկուած ճանապարհը:

Մի խօսքով ամեն տեղ և ամենուրեք, տեղեր կը ճարուեն, որտեղ հնարաւորութիւն կը լինի, ամենին էլ մեծ օգուտ պատճառելով, ճառատնկի տօներ կազմել:

Ընտրուած տեղը պէտք է ցանկապատել կամ այնպիսի պայմանների մէջ դնել, որ ոչ անասունները և ոչ էլ մարդիկ կարողանան փչացնել մատաղ տնկիները: Ամենից մատչելի միջոցներն են, պաշտպանելու համար, չորս կողմն առու փորելը կամ ցանկով պատելը: Առու փորելը չատկապէս օգտակար է այնպիսի տեղում, որ աչքի է բնկնում իւր խոնաւութեամբ:

Ապագայ անկարանի տեղը սահմանադրում են ախօսներով կամ ցանկապատում են փշերով:

Ընտրած տեղը հարկաւոր չափով ցանկապատելուց յետոյ սկսում են բրհել, այսինքն որոշել ամեն մի տնկիի տեղը:

Եթէ պէտք է հինգ-վեց շարք տնկիներ տրնկել, որոնցից իւրաքանչիւրի բարձրութիւնը մէկ արշին է, ապա ամենից չարմարն է, որ բրհեն մէկ սաժէն հեռաւորութեամբ և տնկիները լինեն քառակուսու անկիւնների վրայ. իսկ եթէ քառակուսու մէջտեղն ևս ուղեւան տնկել, այն ժամանակ քառակուսու ամեն մի կողմը հաւասար պէտք է լինի տնկիների հնգապատիկ բարձրութեան:

Քիչ հողս չի պատճառում և տնկիներ հասցնելը: Նրանց պէտք է ձեռք բերել կամ արբունա-

չանուի, այլ անհրաժեշտ է, որ նրա վրայ առանձին խնամք տանեն. այդ նպատակով աշակերտների մէջ հերթապահութիւն է սահմանուում, որ տնկիւների վրայ ուշք դարձնեն:

Աւագ աշակերտները կամ առհասարակ աշակերտներից նրանք, որոնք կը ցանկանան, ազատ ժամերին կամ տօներին նայում են տնկած ծառերը, նկատում են այն տնկիւները, որոնք այսպէս թէ այնպէս վնասուել են կամ չեն բռնել և իրենց բոլոր նկատողութիւններն ու զիտումները յայտնում են տօնի ղեկավարին:

Փչացած տունկերը, եթէ հնարաւոր է, փոխարինուում են ուրիշ տունկերով կամ նրանց փոխարէն նոր տնկիւներ են դնում հետեւեալ ծառատնկի տօնի ժամանակ:

Վերջապէս ցանկալի է, որ ծառատնկի տօները դպրոցական կեանքի բնութանուր շրջանակի մէջ մտնեն. այդ տօները կատարուեն ոչ թէ մէկ կամ երկու անգամ, այլ ամեն տարի, որոշ ժամանակ: Որպէս զի աշակերտների տնկած տունկերը անտէր անտիրական չցրուեն, այլ նրանց վրայ առանձին հսկողութիւն ու պահպանան նշանակուի:

Միայն այսպիսի պայմանների մէջ կարելի է յուսալ, որ դպրոցի օրինակի ազդեցութեամբ ժողովրդի մէջ ևս ծառ տնկելու սէր կարթնանայ, նրանք կսկսեն գնահատել ծառերը, նրանց մասին հոգ կը տանեն և ի գուր տեղն ու անմտաբար չեն կոտորի ու փչացնի անտառները:

Մարդս թէպէտ իւր բնաւորութեամբ խելօք

արարած է, սակայն նա իւր տգիտութեամբ զիտակցարար և անզիտակցարար բուսականութեան ահագին վնասներ է տալիս: Այսպիսի ձեռնարկութիւններն անկասկած ազնուացնում են մարդուն:

Որքան լաւ ճանաչեն բնութիւնն այնքան աւելի լաւ:

ՈՒՍ ՈՒՅԶՍ.ԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Որովհետև մենք մեզ թույլ տուցինք մեր այս զբքով կը նուիրել մեր ուսուցիչներին, այդ պատճառով և վատ չի լինի, որ մեր հասարակութեանը ծանօթացնենք ուրիշ ազգերի և այն ուսուցչական կազմակերպութեան հետ, որոնց կեանքում (յատկապէս բուլղարների) Ուսուցչական միութիւնը այնպիսի մեծ և ազատարար դեր կատարեց:

Կարծեմ մեզանում ևս գոյութիւն ունի ուսուցիչների միութիւն, որը մեր կեանքում իսկապէս առաջնակարգ դեր պէտք է կատարէ. այդպիսի միութիւններ պէտք է կազմակերպուեն և ուրիշ շատ արհեստների մէջ. յատկապէս այժմ մեզ համար ցանկալի կը լինէր, որ ազատարար շարժման միութիւնների գաղափարը լայն տարածուէր մեր հասարակութեան մէջ:

1905 թուի օգոստոսի 1-ի կարգադրութիւնը՝ հայոց դպրոցների դարձնելը, թող մեզ համար ազգային տօն լինի:

Այն միութիւնը, որին նուիրուում են ներկայ շօղուածները *), ըստ ինքեան ներկայացնում է բուլղարական կեանքի ամենահետաքրքրական և առանձնայատուկ երևոյթներից մէկը:

Այս ինտելիգենտ աշխատաւորների՝ ուսուցիչների, իւր տեսակի մէջ միակ, արուեստաւորների մի կազմակերպութիւն է, որի մէջ կարելի է գտնել բանուորների տիպիկական միութեան բոլոր էական յատկութիւնները: Բացի այդ, այս հայրենի երկրի հասցրած պտուղներն են, այս միութեան մէջ զօրեղ կերպով արտացոլում են բուլղարական ներկայ կեանքի և պատմութեան ու նրանց հասարակական և քաղաքական շարարերութիւնների աչքի ընկնող նշանաւոր կողմերը:

Բուլղարական ուսուցչական միութիւնը, բուլղար ուսուցիչների (քաղաքային և զիւղական) սեփական շանքով է կազմակերպուել: Միայն և միայն այդ ուսուցչական խմբին է պարտական այդ նշանաւոր կազմակերպութիւնը թէ իւր ժազումով, թէ իւր յաջողութեամբ, թէ իւր դիրքով, որ նա ձեռք բերեց, չնայած այն դժուարութիւններին ու տեղական կեանքի բոլոր խոչնդոտներին:

Եւ իսկապէս, ով ուսումնասիրել է բուլղարական ազատարար շարժման պատմութիւն ու նրա սկզբնաւորութիւնները, նա անշուշտ զիտէ, թէ դպրոցն այդ շարժման մէջ ինչ տեղ է բռնել:

*) «Բուլղարական ուսուցչական միութիւն». Հրատ. Ղեատսկի ընկերութեան:

Ժողովուրդը արթնանալով, բնութեան անզուսպ ուժով, ամենից առաջ լուսի կարիք զգաց, նա դէպի կրթութիւն գնաց, որի մէջ բնագրաբար տեսնում էր դէպի ազատութեան և զիտակցական կեանքը տանող նանապարհի առաջին աստիճանը:

Նրա հոգսերի կենդրոնը, ազգային եկեղեցու հետ միասին, նրանից անբաժան, կանգնեց բուլղարական ազգային դպրոցը: Բուլղարական քահանայի շրթունքների վրայ սաղմոսի փոխարէն հնչում էին բուլղարական դպրոցը, նրա գիրն ու գրականութիւնը: Այդ գաղափարների միութիւնը նրա համար սրբազան դրօշակ դարձաւ:

Եւ իսկապէս այդ դրօշակի հովանու տակ վերածնունդ ժողովուրդն սկսեց և շարունակեց այն յամառ կռիւր, որ սկզբում մղում էր յունական եկեղեցու իերարխիայի (վարչութեան) տիեզերականութեան, իսկ չետոյ տանիկ կառավարութեան դէմ:

Ամենուրեք, որտեղ որ շարժում էր սկսում, այն, ամեն տեղ, ամենից առաջ ազգային լուսաւորութեան ձև էր ընդունում: Ամեն մի համայնք, երբ մի փոքր արթնանում էր իւր քնած դրուութիւնից և բացում էր աչքերը իւր առաջուայ մթութեան մէջ խարխափող մթնոլորտի մէջ, ամենից առաջ մտածում էր դպրոց բանալ: Իսկ դպրանոցի շէնք կառուցանելը, նրանց օգտին նուիրաբերութիւններ անելն ու նրանց մասին ձշտապէս հոգ տանելն, արդէն ըստ ինքեան դառնում էին

համայնքի հարուստ անդամների պատուաւոր ար-
ածնութիւնը:

Չնայած այն նիւթական զոհաբերութիւննե-
րին, որ հարուստներն անուժ էին դպրոցներին,
դպրոցական հոգաբարձուի տիտղոսը նրանց հա-
մար նոյնքան ցանկալի էր, ինչպէս իսկական պա-
տուի զգացումը:

Դպրոցական հոգաբարձուի տիտղոսը մարդուն
առաջ էր քաշում, նրա համար նոր վարկ էր
ստեղծում — «ազգասէր — հայրենասէր» մականուն-
ներով զարդարում և շրջապատում էր նրան այն-
պիսի պատիւներով, ինչպէս որ մահմեդականներն
են շրջապատում այն «Նաջիին», որ մարդարէի գե-
րեզմանից է վերադառնում:

Բուլղարական այս առաջին դպրոցները, ներ-
կայիս դպրոց գաղափարի տէսակետից, յաճախ ոչ
մի բննադատութեան չէին դիմանում, նրանց մէջ
բժշկական և առողջապահական պայմանները սար-

*) Օգրատոսի 1-ի կարգադրութեան համաձայն, երբ վե-
րադարձրին մեր եկեղեցական կալուածները, լաւ կլինէր,
որ հայ ժողովուրդը օգտուելով հոկտեմբերի 17-ի հրո-
վարտակից իւր ներկայացուցիչներով ինքը կառավարէր
այդ կալուածները ազգային ֆոնդ հիմնելով մեր ազգի մէջ
կուլտուրական լուսաւորութիւն և միութեան գաղափարը
տարածելու համար. իսկ կալուածներն արգիւնաւէտ դար-
ձնելու համար այնտեղ բնակեցնէր հայ գիւղացիներ ու
բանար երկդասեան կամ չորսդասեան գիւղատնտեսական
և անխնիական դպրոցներ:

սափելի վիճակի մէջ էին. նրանք մանկավարժա-
կան ամենահամեստ պահանջներին անգամ զոհա-
ցում չէին տալիս. սակայն այս բոլոր պակասու-
թիւնները չխանգարեցին նրանց Բուլղարական ժո-
ղովրդի մէջ ազգային գիտակցութիւն զարգացնելու
մեծ դերը կատարելուն:

Ժողովուրդն ինքը հիմնելով այդ դպրոցները,
աւելի էր հասկանում և իրեն աւելի մօտիկ էր
զգում նրանց, այդ պատճառով և դպրոցների բա-
րոյական ազդեցութիւնը աւելի շոշափելի ու մեծ
էր ժողովրդի վրայ:

Այդ դպրոցները կառավարում էին ինչպէս ցան-
կանում և ինչպէս կարողանում էին, նրանց պա-
հում պահպանում էին իրենց աչքի լոյսի նման և
նրանք իրենց բոլոր խեղճութեան ու թշուառու-
թեան մէջ նորից ծագկում էին ու բարգաւաճում,
իրենց կարողութեան չափով ժողովրդին լուսաւո-
րութիւն մատակարարելով:

Նրանք հասարակ դպրոցներ չէին, որտեղ երե-
խաներին միայն գրել կարգալ էին վարժեցնում,
այլ նոր տաճարներ էին, որտեղ հինգ հարիւր տա-
րուայ ստրկութիւնից արթնացող ժողովրդի վերա-
ծնութեան մեծ և սրբազան խորհուրդն էր կա-
տարում:

Նրանք տաճարներ էին, որտեղ աշակերտում
էր արթնացած ժողովուրդը, իսկ ուսուցիչները մար-
գարէներ էին: Դժուար էր և պատասխանատու
այն պարտականութիւնը, որ պատմութիւնը դրել
էր նրանց վրայ, բայց այն, չաջողութեամբ մինչև

վերջը հասցրին: Նրանք ոչ թէ միայն դպրոցի մէջ ուսուցիչներ էին, այլ ժողովրդի դաստիարակիչներ և հասարակական գործիչներ էին, որոնք գիտակցական ազգային կեանքի կենդրոն էին կազմում և միևնույն ժամանակ ազատարար շարժման ղեկավարներ էին հանդիսանում:

Նրանց գիտութիւնը, նրանց անձնուրաց գործունէութիւնը, նրանց համոզուած հայրենասիրութիւնը առաջ էին մղում նրանց և հայրենասիրութեան գործի ու տեղական կեանքի վարչական բոլոր գործերի ղեկը նրանց ձեռքն էին տալիս:

Ամեն բան նրանց շուրջն էր պտտւում, ամեն բանի մէջ ձեռներէցութիւնը նրանց էր պատկանում և նրանք էին որոշում հասարակական գործերի ուղղութիւնն ու բնաւորութիւնը:

Նրանք գրադարաններ և ընթերցարաններ էին բացում, երեկոյան և կիրակնօրեայ դպրոցներ էին կազմակերպում, դասախօսութիւններ էին կարգում, լրագրներ և գրքեր էին տարածում:

Նրանցից շատերը տաճկական բռնակալական լծի դէմ մղած կռուի մէջ կենդրոնական և պատասխանատու դիրք էին բռնել, տեղական չեղափոխական կոմիտէների կազմակերպողներ և ղեկավարողներն էին, առաջին ապստամբութիւնների և նրանց հետևող արիւնալի խաղաղացումներով հերոսներն ու զոհերն էին...

Նրանք իսկապէս իրենց ժողովրդի առաջնորդներն էին և նրանց ղէպի նոր կեանք տանողը: Բուլղարական ազգային վերածնութիւնը իւր յաջո-

ղութեամբ պարտական է նրանց և նրանց անձնուրաց ու արդիւնաւէտ գործունէութեան:

Ամենի վրայ փայլում էր զուարթութեան, և ղէպի ինքն ու կեանքն ունեցած կատարեալ հաւատի ու յուսոյ դրոշմը: Ժողովրդի, ուսուցչի և նրա դպրոցի մէջ թագաւորում էր կատարեալ ներգաշնակութիւն:

Ազատութիւնը վրայ հասաւ և ամենակարճ ժամանակում ինչպէս միւս բոլոր գործերի մէջ այնպէս էլ այստեղ ահագին փոփոխութիւն առաջ եկաւ:

Նոր պետական բարդ մեքենան, պահանջ էր զգում բոլոր պատրաստ ինտելիգենտ ոչժերի. և այդ ժամանակ Բուլղարիայում որքան ինտելիգենտ, երիտասարդ և ընդունակ ոչժեր կային պետութիւնը ժողովեց իւր օգտի, իւր պէտքերի համար գործադրելու: Դպրոցներում մնացին միայն նրանք, որոնք աւելի լաւ պաշտօն գտնել չկարողացան և այս բոլորը ամենակարճ ժամանակում զօրեղ կերպով ազդեցին կրթական գործի վրայ:

Ուսուցիչը մի կողմն է թողնում այն իդէալականութիւնը, գաղափարականութիւնը, որ նա ունէր նախ քան ազատութեան շրջանը. նա դառնում է աստիճանաւոր — չինովնիկ, որ իւր գործին վերաբերւում է զուտ ձեական կերպով, որ ձանձրանում է իւր պաշտօնից և այն շարունածանքից զրդուած, այլ մի կտոր հացից չզրկուելու համար:

ժողովուրդն և ս համեմատաբար սկսում է սառ-
 չել նրանից: Առաջ նա առաջնորդ և հերոս էր,
 այժմ դարձել է ծառայ և խորթ զաւակ: Առաջ
 ամենքը նրան յարգում էին, իսկ այժմ նրա վրայ
 նայում են արհամարհական ողորմածութեամբ: Այդ-
 պիսով դպրոցները սկսեցին թէ բարոյապէս և թէ
 նիւթականապէս քայքայուել:

Բուլղարիայի ազատութեան առաջին տասը
 տարիները նրա կրթական գործի զարգացման ամե-
 նատխուր շրջանն են ներկայացնում: Այդ ժամանակ
 ուսուցիչները տեղական վարչութիւնների հյու գոր-
 ծիքներն են դառնում:

Սակայն անցնում է ժամանակը և ասպարէզ
 են գալիս նոր սերունդներ: Ազատ Բուլղարիայում
 ծնւում ու զարգանում էին նոր, երիտասարդ ին-
 տելիգենտ ուժեր, և որովհետեւ պետութեան մէջ
 լաւ տեղերն արդէն բռնուած էին, այդ պատճառով
 այդ երիտասարդների մի մասը նորից դէպի դրպ-
 րոց գնաց, ի միջի ալրոց նրանք իրենց ձեռքն
 առան և ժողովրդական դպրոցները: Ուսուցչական
 կազմը նորից վերածնուեց:

Նրանց մէջ յանախ աչքի էին ընկնում զաղա-
 փարական երիտասարդութեան ներկայացուցիչները,
 որոնք ծնուել էին ազատ հողի վրայ համակուել
 ժամանակի առաջադէմ զաղափարներով ոգևորում
 էին վերածնութեան շրջանի իրենց նախորդների
 օրինակով:

Բայց ինչ որ նրանք իրականութեան մէջ էին
 տեսնում, այդ բոլորը խիստ զօրեղ կերպով հակա-

սում էր ժողովրդական կրթութեան նոր դեկա-
 վարների թէ բնաւորութիւնը և թէ նրանց ձրգ-
 սուսներին: Դպրոցները կամաց, կամաց սկսում էին
 ցիրուցան լինել և կազմալուծուել: Տեսուչներն ու նա-
 խարարութիւնից նշանակուած վերահսկիչները —
 բիւրոկրատ և ձեւականութեան ստրուկ մարդիկ
 էին:

Այս բոլորի մէջ ամենից սարսափելին ուսուց-
 չի վիճակն էր: Նա խայտառակում, ստորանում
 ու բոլորի խաղալիք էր դառնում և այս բոլորը
 այն անձանց պատճառով, որոնք յայտնում էին
 էրբև իշխանութեան ներկայացուցիչներ:

Նա զրկուած էր սեփական քաղաքական հա-
 մոզմունք ունենալուց, դէպի քաղաքական որոշ
 գործիչները իւր համակրանքն արտայայտելուց, նա
 զրկուած էր դէպի կեանքն ունեցած իւր զգացում-
 ներից ու հայեացքից, իւր սեփական, անձնական
 արժանաւորութիւնների դիտակցութիւնից:

Վերջապէս դպրոցում, գործի ժամանակ, նա
 կատարեալ աէր չէր. նա պարտական էր զոհացնել
 և դիւր գալ «օրուայ զօրեղին» — աղաներին և
 նրանց նախապաշարուսներին ու հաշակին յարմարե-
 ցներ իւր մանկավարժական սկզբունքները:

Նա չէր կարող դասախօսութիւն կարդալ,
 ընթերցարան կամ զրադարան բանալ առանց իւր
 դէմ մասնութիւն ու հալածանք բարձրացնելու:
 Այս բոլորի հետ միասին նա չնչին սոնիկ էր ստա-
 նում և այն էլ սարսափելի անկանոն կերպով
 շարունակ ուշացրած և զեղջած:

Մրանք էին այն պայմանները, որոնց պատահում էին երիտասարդ նոր ուսուցիչներն իրենց գործունէութեան ասպարիզի մէջ: Պարզ է, որ այդ պայմանների հետ նրանք հաշտուել չէին կարող. և այդ կարգերի ու օրէնքների դէմ կռուելն ու մաքառելն իրաւացի էր, անհրաժեշտ և անխուսափելի:

Այս կռիւր սկզբում դեռ ևս չէր արտայայտուում մարմնացած ձևով, բայց այն արագ կերպով տարածուեց ուսուցչական շրջանի մէջ, աւելի չափաւ ու սաէպ բողոքներ էին լսուում գոյութիւն ունեցող աղմուկների ու խառնակութիւնների դէմ և ամենուրեք պահանջներ էին դրուում երկրի մէջ դպրոցական գործի մէջ բարեփոխութիւններ մտցնելու համար, որոնց մէջ առաջին տեղը բռնուում էր ուսուցչի նիւթական և բարոյական վարքն ու հեղինակութիւնն բարձրացնել դպրոցի մէջ, իսկ նրանից դուրս նրան քաղաքացիական ազատութիւն տալ:

Մի քանի դէպքում ուսուցիչներն այս բողոքող արածադրութիւնը փորձեցին փոխել կազմակերպուած գործունէութեան, սկսեցին հրատարակել իրենց «Ուսուցչական լրագիր» թերթը, որը ստիպողական կերպով և ոչ առանց տաղանդի քարոզում ու տարածում էր այն միտքը, թէ ուսուցիչներն երբէք չպէտք է յոյս դնեն ուրիշների վրայ, այլ իրենք սեփական և ընդհանուր ուժերով պէտք է կռուեն իրենց զրութիւնը բարելաւելու համար:

Այստեղ, առաջին անգամ, պարզ ու որոշ կերպով արտայայտուած էր այն միտքը, թէ այսպիսի ընդհանուր ուսուցչական կազմակերպութեան կռուի չաջողութեան համար անհրաժեշտ է կազմակերպել բուլղարական ուսուցիչների ընդհանուր մի կազմակերպութիւն: Բայց այսպիսի շարժման չաջողութեան համար դեռ հողը հարկաւոր չափով պատրաստ չէր, այդ պատճառով և թերթը շուտով դադարեց դուրս գալ:

Այս ախուր հետեանքը բացատրուում է մէկ ներքին երկպառակութիւնների և անհամաձայնութիւններիով, որ առաջ էին բերում և բորբոքում տեղական դպրոցական վարչութիւնները, մասամբ էլ հէնց պետութեան ձեռք առած անմիջական ճնշումների շնորհիւ, որ արտայայտուում էր շարժման զեկավարներին և ձեռներէցներին պաշտօնից արձակելով և տեղից տեղ փոխադրելով:

Թէպէտ յետոյ նախարարութիւնն ինքը ձեռք զտուեց բարեփոխելու ընդհանրապէս դպրոցը և բարելաւելու ուսուցիչների վիճակը, բայց անչաջող զնաց և ամեն բան բիւրոկրատական ձևով կազմադնաց և ամեն բան ինքը կառավարուկերպուեց: Նորից շատ բան ինքը կառավարութիւնն արաւ, միայն գործի կէտը երկայնացաւ, ինչպէս առհասարակ անում է բիւրոկրատիան:

Բայց ուսուցիչների մէջ դժգոհութիւնը քանի գնում մեծանում էր ու աճում և վերջապէս նրանց մէջ միտք ծագեց միացեալ, խմբական մի խնդիր ներկայացնել կառավարութեանը, բայց խըն-

դիրք միայն դիւանատուն հասաւ և այնտեղ էլ կորաւ:

Գործի այս հետեանքը չէր կարող չվիրաւորել ուսուցիչներին և էլ աւելի զօրացնել նրանց դէպի կառավարութիւնն ունեցած հակառակ տրամադրութիւնը: Աւելի ամեց կռիւ շարունակելու նրանց վնասականութիւնը: Աւելի յաճախ ու ստէպ նրանց նաւերի մէջ սկսեց երևան գալ ռազմական տոնը: Կռիւր նրանց համար պարտականութեան և պատուի խնդիր էր և կեանքի օրէնք:

Այս ռազմական տրամադրութիւնը կամաց, կամաց բռնեց ուսուցիչների մեծամասնութեանը և գերակշռող դիրք ստեղծեց նրանց մէջ:

Մեզ մերժում են ամենաանհրաժեշտ բաներն անդամ, ասում էին նրանք իրար, մենք պէտք է այն ինքներս ձեռք բերենք: Մենք շատուր ենք, մենք ոչ ժ ենք կազմում, որին աչքաթող անել չի կարելի:

Մենք պէտք է միայն այս գիտակցենք, մենք պէտք է հեռացնենք մեզանից նախանձի և հակառակութեան ոգին, որ մեր մէջ բոյն է դրել, թոթափենք մեզանից անտարբերութիւնը, մեր պարտականութիւնները կատարելու ժամանակ զործ դրած ձևականութիւնը, կուսակցական խարդաւանանքներն ու զգացումները, պէտք է հասարակութեան համակրանքն ու ժողովրդի յարգանքը ձեռք բերենք:

Մենք պէտք է միայն համակուենք համերաշխութեան գիտակցութեամբ և առժամանակ միացնենք

մեր ցրուած ոչժերը: Այն ժամանակ, այս միայն այն ժամանակ մենք կը կարողանանք մեր լուսաւորութեան գործը դնել հարկաւոր բարձրութեան վրայ: Միայն այն ժամանակ մենք իբրև մարդ գոյութիւն ունենալու և ապրելու իրաւունք ձեռք կը բերենք:

Միայն ընկերութիւնների (միութիւնների) մէջ կը ամրապնդուին ու կը զարգանան բնաւորութիւնները, կը հաստատուի առնականութիւնը, կմշակւի համերաշխութեան գիտակցութիւնն ու պարտաճանաչութեան զգացումը:

Ըստ ինքեան ուսուցիչը, որ միայնութեան մէջ ոչնչութիւն է՝ գերօ, ընկերութեան մէջ կարող է հանդէս գալ իբրև մարդ-քաղաքացի:

Շնորհիւ այսպիսի հայեացքի դէպի ուսուցչական կազմակերպութիւնն, այն, մեծ ծաւալ ստացաւ մինչև անգամ Բուլղարիայի խուլ զաւառական անկիւններում:

Այստեղ մէջ ենք բերում քաղուածներ այն կողից, որ մի խումբ ուսուցիչներ 1894 թ., հոկտեմբերի սկզբին ուղղեցին իրենց պաշտօնակիցներին:

Մասնացոյց անելով գոյութիւն ունեցող կառավարութեան ձեռ-ռեժիմի անմխիթարական կողմերի և այն անհրաժեշտութեան վրայ, թէ պէտք է կռիւ մղել այդ ռեժիմի դէմ հասնելու համար «ուսուցչի դպրոցային բարձր նպատակին» որ է «ուսուցչի դպրոցական և դպրոցից դուրս կատարած աշխատանքի և դպրոցից դուրս կատարած աշխատանքի օգնութեամբ հասնել ժողովրդի մտաւոր զարգաց-

ման», ուսուցչական կոչը առանձին շեշտով և ուժով պնդում է այն բանի վրայ, թէ այդ նպատակին հասնելու համար միակ միջոցն ու ճանապարհը ուսուցչական ընկերութիւններն են, որոնց մէջ ուսուցիչը ոչ թէ ստանում արդարութեան և բարի գործի համար կռիւ մղելու...

«Միայն միութեան մէջ է մեր յոյսը» եզրափակում է կոչը, «Երբ դու մենակ մնաս, թոյլ և անօգնական կը լինես: Բաժանուիր քո գործակից ընկերներիցդ և դու կը գրկես քեզ ամենալաւ բերկրանքից»:

Ընկերներ, մենք պէտք է հասկանանք այդ, մենք պէտք է միացնենք մեր ոչժերը և մի սիրա, մի հոգի դարձած ձեռք ձեռքի տուած կռուենք լուսաւորելու համար մեր ժողովուրդը, որի մէջ և որի աշխատանքով մենք ապրում ենք:

Երկար հալածանքներից ու թափառումներից չետօյ, վերջապէս 1895 թուի ամառը, Սօֆիայում հրաւիրուեց առաջին անգամ համարուղարական ուսուցչական ժողով, որ և ուսուցչական միութեան հիմք դրեց:

Այդ ժողովները սկզբից մինչև վերջը չափաւորութեան և (գործունէութեան) լրջութեան բնաւորութիւն էին կրում, որոնց շնորհիւ և նրանք իրենց ժամանակակիցների և ականատեսների վրայ ամենալաւ տպաւորութիւնն են գործում:

Ահա ուսուցչական միութեան էական կողմերը. 1) ժողովրդական մասսայի մտաւոր և բարոյա-

կան զարգացումը և 2) կրթութեան գործը բարձրացնել իրեն վաչել զիրքին ու աստիճանին:

Այս նպատակներին հասնելու համար ընդունում են հետեւեալ միջոցները. ա) Աշխատել ու հոգալ բարելաւելու բուլղարական ժողովրդական ուսուցչի մտաւոր, բարոյական ու նիւթական զրութիւնը: բ) Ապահովել ուսուցչի իրաւունքներն ու անկախութիւնը դպրոցում ինչպէս՝ մանկավարժի և կեանքի ու ժողովրդի մէջ ինչպէս հասարակական գործչի: գ) Անարդար կերպով հալածուած ուսուցիչների դատի պաշտպանութիւն և կարողութեան չափով օգնել նրանց: դ) Միութեան զրամարկ հաստատել: ե) Նրատարակել և տարածել այնպիսի թերթեր և ամսագրեր ու զրքեր, որոնք համապատասխանեն միութեան նպատակներին:

զ) Մանկավարժական և հանրակրթական բովանդակութեամբ դասախօսութիւններ կարգալ, բանալ գրադարաններ, ընթերցարաններ, երեկոյեան և կիրակնօրեալ դպրոցներ: է) Կազմակերպել նոր ուսուցչական ընկերութիւններ և այն միացնել ուսուցչական Միութեանը և ը) քննադատն այն օրէնքներն ու բոլոր կարգադրութիւնները, որոնք կապ ունեն կրթական գործի հետ:

Այն գաւառական ուսուցչական ընկերութիւնները, որոնք Միութեան մէջ են, անկախ են տեղական այն բոլոր գործերի մէջ, որոնք չէին շեղում վերոյիշեալ նպատակներից: Իսկ ընդհանուր բնաւորութիւն կրող գործերի մէջ նրանք ենթարկւում են Միութեան կենդրոնական կազմակերպու-

Թեանր, որ կազմուած է կառավարող և վերաստուգող կոմիտէտներից, որոնց անդամներն ամեն տարի ընտրուած են կոնգրէսի — ժողովի ժամանակ:

Ղեկավարող կոմիտէտը բաղկացած է ինն անդամներից, ունի նախագահ, նախագահի օգնական, քարտուղար, քարտուղարի օգնական, զանձապահ, մատենադարանապետ և երեք խորհրդական:

Կոմիտէտը խմբագրում է միութեան թերթը, կառավարում է դրամարկղը, ամեն տարի հրատարում է ընդհանուր ժողովներ, հետևում է ուսուցչական շարժմանը, պահպանում ու պաշտպանում է նրա անկախութիւնը և հոգս է տանում նրա զարգացման համար:

Վերջապէս միութեան ընդհանուր ժողովները տեղի են ունենում ամեն տարի, որի ժամանակ այն ուսուցչական ընկերութիւնները, որոնք յիսուն անդամից պակաս թիւ են կազմում, այդ կոնգրէսին մասնակցելու համար ուղարկում են մէկ ներկայացուցիչ, իսկ աւելի բազմանդամ ընկերութիւններն երկու և մինչև անդամ երեք ներկայացուցիչ:

Կոնգրէսներն իշխանաբար վճռում են յարուցւած բոլոր հարցերն ու խնդիրները: Նրանց է պատկանում բարձրագոյն վերահսկողութիւնը, ներանք են ընտրում ղեկավարող-վարչական խորհրդի անդամներին, նրանք կարող են կազմակերպութեան ծրագրի և կանոնադրութեան մէջ փոփոխութիւն մտցնել, և այլն և այլն:

Միութեան դրամարկղը գոյանում է հետևեալ եկամուտներով. 1) անգամավճարներով, որ վճարում է ամեն մի ուսուցիչ իւր ոռնիկի $1\frac{1}{2}^0/0$. 2) միութեան հրատարակութիւնների եկամուտներով. 3) երեկոյթներից, դասախօսութիւններից և այլն գոյացած զուճարներով. 4) պատահական նւերներով:

Կոնգրէսը խիստ կերպով հոգալով ուսուցչական իրաւունքների մասին չմոռացաւ և ուսուցիչների պարտականութիւնների մասին, իսկ աւելի ևս, ոչ էլ աչքաթող արաւ ընդհանրապէս կրթութեան գործի օգուտը:

Նա խիստ կերպով առաջարկում էր, որ ուսուցիչը ի չարը գործ չդնէ իւր իշխանութիւնը, որ աշխատէ ընդարձակել իւր մանկավարժական և հասարակական գիտութիւնների պաշարը, իւր գործի մէջ զաղափարական չիղ մտցնէ և երբէք չմոռանայ դէպի ժողովուրդն ունեցած իւր պարտականութեան մասին: Ընդհանրապէս ուսուցիչը պէտք է աշխատէ թէ իբրև ուսուցիչ և թէ իբրև հասարակական գործիչ իրեն այն բարձրութեան վրայ պահի, ինչ զիրքի վրայ որ կանգնած էին իրենց աւագ եղբայրները, նախ քան ազատութեան շրջանի գործիչները, և բոլոր ոյժերով ծառայեն ժողովրդի կրթութեան ու նրա դաստիարակութեան գործին:

Կոնգրէսը փակուեց հետևեալ կոչով. «Ընկերներ, դուք, որ մեր միութեան անդամ էք զառել, երգուեցէք և իրար ձեռք տուէք ու ոգևորուած

մեր մեծ նպատակով միահամուռ ուժերով աշխատեցէք այն իրականացնել: Յառաջ մեր շարժման մէջ, կէցցէ մեր միութիւնը»:

Վախենում ենք, որ չձանձրացնենք մեր ընթերցողներին մնացած մասը արդէն մասնաւոր բնաւորութիւն ունի: Թող այս բոլոր ասուածները մեզ համար ևս դաս լինի:

Մենք երբէք չպէտք է մոռանանք այն մեծ զոհերը, թէկուզ վերջին կոտորածների. թող օգոստոսի 1-ի և հոկտեմբերի 17-ի կարգադրութիւններն ու հրովարտակները մեզ համար լուսատու աստղեր լինեն!

Ինչ վերաբերում է ժողովրդին, «հասարակական կարծիքին», վերջ ի վերջոյ, պէտք է ասել որ նա ընտելացաւ Միութեան վրայ նայելու, իբրև մի զօրեղ կազմակերպութեան վրայ, որ օրէնքով իսկապէս չանձին իւր ներկայացնում է ամբողջ բուլղարական ուսուցչական դասակարգը!

ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ԽՕՄԲԸ.

Սյո, կազմակերպութիւնը մեծ գործ է: Պէտք է կազմակերպուել:

Մեզանում, այժմ այս ամենապտանդունոր բուպէին ամենից աւելի անհրաժեշտ է, որ երկրի բոլոր առաջապէմ տարրերը միանան ու կազմակերպուեն, և այդ որքան շատ, այնքան լաւ:

Կազմակերպութիւնը մի դատարկ խօսք չէ, նրանով հասկացում է կազմակերպութեան մէջ

մտած անդամների որոշ կարգ ու կանոնի ենթարկուելը անդրդուելի ու հաստատուն վերաբերմունքը դէպի գոչութիւն ունեցող երևոյթները, և գործունէութեան ու եզրակացութիւնների մէջ չըշտակելն ու հետեականութիւն պահելը:

Սարսափելի յետադիմութեան ենշման տակ, երբ այն բռնում է ամբողջ երկիրը և աւելի զօրեղ լինելու համար ժողովում է իւր բոլոր ուժերը, ոչ միայն ժողովրդի թափրփուկների, այլ և ստորին խաւերի, միջին ու բարձր դասակարգերի մէջ, հասարակութեան միւս խմբերի առաջադէմ ձգտումներն իրենց գոչութիւնը կարող են պահպանել միայն կազմակերպուելով և սերտ կերպով իրար հետ միանալով:

Որևս ժողովրդի վերջին չաղթութիւնները ձեռք բերուեցին այն համոզմունքների և գործունէութեան պաշտպանութեամբ, որոնցով համակուած էին ժողովրդի և հասարակութեան բոլոր լուսաւոր ու առաջադէմ տարրերը:

Ընկերութիւնների միութիւնները, ժողովներն ու ազատ խօսքը վերջին ժամանակներս ռուսաստանում հանդէս էին գալիս ինքնազուլ կերպով, բայց զժրախտաբար, բոլորովին անկախ պատճառաբաց զժրախտաբար, բոլորովին անկախ պատճառներով. այդ մասին մեր մամուլի մէջ համարեա թէ չէր չիշատակուում:

Համարեա թէ, ինչպէս իրականութիւն, ազատութիւնը պաշտպանուում և մտնում էր կեանքի մէջ:

Մի անգամից համոզուած լինելով, որ ազա-

տութիւնը անհրաժեշտ է — նախկին վախկոտ ժողովրդի անդամները համարեա պարծան քաղաքացիներ և այլ ևս չկամեցան հնազանդուել հրամանների և շրջաբերականների:

Վերջապէս ընդհանուր գործադուլը — չեղափոխական սարսափելի մի զէնք է, որը անկասկած վճռողական դեր կատարեց տէրութեան նոր սկրզբունքների չաղթութեան մէջ, հների դէմ, իրականապէս և իւր ձեռով սա կատարեալ խաղաղ միջոց է կռուի համար, միևնոյն ժամանակ մի միջոց, որը իւր մէջն է պարունակում աւելի շատ պաշապանողական, քան չարձակողական ձև, աւելի կրաւորական, քան ներգործական ազդեցութիւն:

Գործունէութեան այսպիսի միջոցը, այսպիսի ուղղութիւնը անկարելի էր այն ժամանակ — էրբ ընդդէմ — տրամադրուած տարրը չափազանց փորձամասնութիւնն էր կազմում և, ընդհակառակը, նա դարձաւ աւելի կարող, ուժեղ գործիք, էրբ նորա քանակութիւնը մեծացաւ: Բայց կռուի այսպիսի միջոցը երևան էկաւ կազմակերպութեան շնորհիւ:

Ներկայումս մեզ համար ևս կազմակերպութիւնը գառնում է աւելի անհրաժեշտ իրականապէս նուաճելու տչն ազատութիւնները, որոնք չայտարարուած են հոկտեմբերի տասնևօթի հրովարտակով, և միևնոյն ժամանակ աւելի կարելի — իրագործելի, որովհետև միացած կազմակերպութիւնների ուղին, ինչպիսիներն են ամեն տեսակ ընկերութիւնները, միութիւնները և կուսակցութիւնները,

արդէն քաղաքացիական իրաւունք է ձեռք բերել և դառնում է օրինական ճանապարհ:

Կազմակերպութիւնների ուղին աւելի կարևոր է հանդիսանում ժողովրդական մասսայի մէջ, որոնցից նոյնիսկ այժմ պէտք է կազմել արհեստաւորական և հասարակ - քաղաքական միութիւններ, ընկերութիւններ, խմբեր և այլն:

Հասարակական դժուարութիւնները, բայց միևնոյն ժամանակ և ամեն տեսակ կազմակերպութիւնների առանձին անհրաժեշտութիւնը երևան են գալիս մեր գիւղական շրջաններում:

Մենք կարծում ենք, որ մեր ժողովրդի քաղաքակրթուած խաւերի և հասարակութեան ոյժերը կ'կալանան աւելի նոցա համոզուած ու կազմակերպուած լինելու մէջ և ոչ միայն ուրիշ տեսակէտից, որովհետև ընդհանուր քաղաքական շուղմունքների ժամանակակից պայմանների շնորհիւ, ոչ մի արհեստաւորական, կամ քաղաքակրթական - հասարակական կազմակերպութիւն չի կարող զանց առնել քաղաքականութիւնը, չի կարող քաղաքական դէպքերից դուրս և նոյն քաղաքական ազդեցութիւնից ազատ մնալ:

Միզիքական ոյժով կարելի է ճնշել երկրիս չառաջադէմ խաւերը, սակայն միայն ժամանակաւորապէս, իսկ համոզմունքի ոյժը և այն բարոյական ամրութիւնը, որոնք չառաջադէմ խաւերի ազատուածութեան ձգտումների չատկանիչներն են, վերջ ի վերջոյ ճնշել — խեղդել անկարելի է:

Բայց հաստատուն պահելու համար այն ամե-

նր, ինչ ստացուած և ձեռք է բերուած, չետագայում նոյնպէս անհրաժեշտ է ամենարնդարձակ և ամուր կազմակերպումն. մենք կարծում ենք, այժմ դէպի դա պիտի ուղղուեն մեր ինտելլիգենցիայի և մեր ժողովրդի քաղաքակրթուած խաւերի ոյժերը, և չենք էլ սխալուծ:

Առանց յառաջադէմ կուսակցական խտրութեան անհրաժեշտ է իսկոյն միաւորուել. ներկայումս զոյութիւն սենցող կազմակերպութիւնները ինչպէս օր. սպառողական (կօօպերացիա) և բարեգործական ընկերութիւնները պիտի ամրապնդուին և լայն ծաւալ ընդունեն:

Մեզ էլ տուած են քաղաքացիական ազատութեան հիմնական իրաւունքները, որոնց պահպանելու համար հարկաւոր են, իբրև ինքնապաշտպանութեան զէնք, քաղաքակրթութիւն և մեր ցրուած ժողովրդի համախմբումն:

Սրանով, թերևս, մենք կրժառայենք միայն իբրև հող նոր մարդկանց և ապագայ նոր փայլուն օրերի համար: Այն ժամանակ խաւարը կրցրուի և արևը իւր կենսատու ճառագայթներով կըլուսաւորէ և կըշերմացնէ մեր խեղճ, տանջուած ժողովուրդը!...

Ազատութիւնը առանց ինքնագիտակցութեան աներևակայելի է, ինքնագիտակցութիւնը սնունդ է ստանում զիտական զպրոցից, որը լուսաւորում է ժողովրդական հոգու խաւարները. բայց և ընդհակառակը, լուսաւորութեան չաչողութեան համար

—նսխ և առաջ հարկաւոր է ազատութիւն՝ բնական հետեանքը գառնում է անխուսափելի պատճառ, երկու երևոյթն ևս պիտի ծագեն միաժամանակ, զուգահեռաբար քաղաքակրթուեն, փոխադարձաբար պայմանաւորուելով և մէկը միւսին զարգացնելով:

Դեռ շատ կեանքեր պիտի կորչին, շատ արիւն պիտի թափուի—սակայն հարկաւոր է զիտակցել մի բան, որ ուժեղներն են ձեռք բերում իրենց իրաւունքները:

Արի եղէք!



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ-
ԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵԻԵԱԼ ՊԱՏԿԵ-
ՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Բեորնսոն՝ կազմեց Ե. Թովչեան	104
2. Մաննէզ, " " "	7,,
3. Մեսրոպ՝ Մաշտոց՝ կազմեց Ե. Թ.	5,,
4. Սահակ Պարթև՝ " "	5,,
5. Հաուպաման՝ " "	15,,
6. Մեծն Ներսես՝ " "	5,,
7. Ջրագաշտ՝ կազմեց Մ. Թամաճշեան	7,,
նորութիւն կաթնատուների (26 պատկ.) Գ. Մեծատուրեանի	15,,
9. Ռ. Վիլբուլ՝ կազ. բժ. Ս. Բուդուզեան	25,,

Պատրաստ է ապագորութեան համար՝
Ա. Բալանթարի.—Հանրամատչելի ձեռնարկ կաթ-
նատնտեսութեան:



Լոյս տեսաւ Ե. Թովչեանի «Լոյս» պատկերա-
պարզ օրացոյցները 1906. թ. (պրպանի և պա-
տի):

Դիմել՝ Թիֆլիս Մաղաթովսկայա 5. Ե. Թովչեան.

«Ազգային գրադարան»



NL0231505

ՌԺ. Ա. ԲՈՒԳՈՒԳԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Առաջին օրնութիւն մինչև բժշկի գալը (սպաս.)	5	4
2. Վարակիչ հիւանդութիւններ	5	»
3. Ինչ է սիֆիլիսը	5	»
4. Առողջապահական գրոյցներ	5	»
5. Ինչ է ժուժիկութիւնը	5	»
6. Ինչ է անառակութիւնը	5	»
7. Վննորական ախտեր	5	»
8. Աշակերտի առողջապահութիւն	2	»
9. Մեր ներազերը	10	»
10. Սիֆիլիս (բարեփոխուած)	10	»
11. Առողջ հոգին առողջ ժարմնի մէջ	10	»
12. Գեղձախտ (գօլօտուխտ)	10	»
13. Ո՛վ է յանցաորը	15	»
14. Կարիք և բարեգործութիւն	15	»
15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն	15	»
16. Մանկավարժական համառօտ գրոյցներ	15	»
17. Մարմնամարդութիւն (25 պատկերով)	20	»
18. Առողջապահական նուէր նորասի կանանց	20	»
19. Կինը և տղամարդը	15	»
20. Վերաբուժական հիւանդութիւն և օպերացիա	5	»
21. Ինչ է կաշու հիւանդութիւնը	15	»
22. Երիտասարդութիւն և ծերութիւն	15	»
23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին	20	»
24. Ուղեղի սիֆիլիսը (զլխի և ողնաշարի)	20	»
25. Ստամոքսի կատարը	20	»
26. Քուն և երազ (մի պատկերով)	25	»
Մեծագիր պատկեր «Քուն և երազ» առանձին	10	»
27. Գործարան թէ երկրագործութիւն	15	»
28. Մնապաշտութիւն ու կախարդութիւն	20	»
29. Մտերմական խորհուրդներ պատանիներին	20	»
30. Գոյութեան կռիւ	20	»
31. Ռուբոյլֆ Վերլտով	25	»
32. Սէր և խանդ (մի պատկերով)	20	»
33. Անառակութիւն և պոռնկութիւն	20	»
34. Նուէր հայ գինւորին	20	»
35. Նուէր հայ վարժապետին (դպրոցական առողջապահութիւն)	20	»
36. Նուէր հայ դպրոցականին	10	»

Գինն է 20 կոպ.

Դ Ի Մ Ե Լ՝ Թիֆլիս Կենդրոնական և Գուտաւներեղ Գրավանձաւանոցները.

Պահեստը զանուս է Պետերբուրգ:

«Պուշկինեան արագատիպ» Լեշտուկով փ. տ. 4.